ԿՈՒԻՆՏՈՍԻ

# ՈՐԱՏԵԱՑ ՓԼԱԿԿՈՍԻ

## ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

ԿՈՒԻՆՏՈՍԻ

# ՈՐԱՏԵԱՅ ՓԼԱԿԿՈՍԻ

## ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՉԱՓՍ ՀԱՅԿԱԿԱՆՍ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ

ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲՔ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

Ի Հ. ԱՐՍԵՆԷ ԿՈՄԻՏԱՍԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1847

9367-52

1922-ԱՀ

ԱՌ

ՎԵՀԱԶՆ ՀԱՆՃԱՐԵՂ

# ՅԱԿՈԲ ՏԻՒԶ

ՅՈՍԿԻ քնարն Որոտեայ կրթեալ մատամբ հայեցի
Ըզգեղեցիկ Մուսայից ասս յԱյրարատ ձայնեցի,
Իբրեւ նոքա Ծաղկեցս ալ Երասխայ շարարին
Նուրբ ՚ի փանդռանացն նուագս հնչել յերկիր օտարին.
Ի քոյդ անուն հրաւիրեալք՝ զան աւաղիկ գեղապար,
Ըսկիզբն ՚ի Վէին առնիցեն անմահ երգոց հեշտաբար.
Ընդ աւանեան սարդենւոյն՝ ուր ՚ի Մասեաց սուրբ ընդ հիւս
Վեղ անթառամ ՚ի ճակատ քողըրեսցին, ՅԱԿՈԲ ՏԻՒԶ.

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ բաղդ փափաքելի իցէ ամենայն ուսմանց, զի 'ի վեհագոյն վարժապետէ աւանդեսցին սկզբունք նոցին, որ և ինքնին իսկ ձարտարն քաջ իցէ 'ի գիտութեան անդ կամ յարուեստի, ոչ ոք դժբաստ լինել մարթասցէ՝ եթէ այդմ բարեբաստութեան հասեալ է Արուեստն քերթողական։ Զի ահա ոչ այլ ոք, բայց Արիստոտէս հանճարեղն իմաստասէր քննական, և միանգամայն մեծն և սքանչելին 'ի քերթողս հռովմայեցւոց է մեզ աստանօր, որ զայս տարերս բանաստեղծութեան աւանդէ սուղ և համառօտ չափեալ բանիւ, իբրև վճռական լուսաւոր և աներկեան պատգամն՝ ոչ միայն այսր արուեստի, այլ ընդ նմին գրեթէ և ամենայն գրչութեանց և գեղեցիկ արուեստից և կիրթ ախորժակաց առ հասարակ, 'ի գլխաւոր և յընդհանուր գիտելիս դեգերեալ եւեթ, և ոչ 'ի մանր մանր մասունս աղամնղեալ, ուշիմ ընթերցանելեաց թողեալ զայն 'ի մտաածել ըստ իւրաքանչիւր պատշաճի։

Այլ զի ամենայն քերթութիւն յերկուս ընդհանուր տեսակս որոշի, 'ի վիպականն՝ ուր քերթողն ինքն խօսի և վիպէ ինչ, և 'ի դրամականն կամ թատերականն՝ ուր գուսանաց տայ խօսել և գործել, զառաջինոյն զկարևորն եւեթ կարճառօտ հատեալ՝ փոքր մի առաւել 'ի թատերականն ձգիցուք։ Իբրու զի գիտաւոր օրէնք հան-

ժամանաց սորայս և նորայն գրեթէ նոյն են ըստ կարևոր մասանց. և զի Թատերականն աւելի իմն պերճագոյն և սուր հանճարոյ և դժուարութեան գործ համարեալ է առ բազումս, և առ Արիստոտէլ ինքնին, որ և այսց երկուց պատճառաց աղագաւ ոչ այլ ինչ ոճ կալեալ է և ինքն յիւրում ամենապատուեալ քերթողականին, որ առ մեզ զի կրծեալ է յամենածախ ժանեաց ժամանակին:

Վասն այսպիսի և այսքանեաց պատգամախօս համառօտութեանն՝ այնքան հոծ է և խիտ Թաքուն իմաստիւք այս քերթուած որատեան, մինչ զի ՚ի վերայ միոյ միոյ բանից նորա մարթի յօրինել գիրս մի ճառից, եթէ մեկնութեամբ ընդարձակել ոք կամիցի: Ի խրատական քերթուածս նախնեաց, յետ Մշակականացն Վիրգիլեայ, չիք ինչ այլ ճարտարարուեստ և շահեկանագոյն. եթէ այն օգտախառն զուարճութեան մասամբ առաւել է քան զսա, սա ըստ զուարճախառն օգտակարութեանն գլէ զայն: Եւ չիք քերթուած պիտանի որ այնչափ ընթերցեալ և յիշատակեալ և ՚ի վկայութիւն առեալ իցէ իբրև զսա. մինչև բազմաց ՚ի քաջակիրթ և ՚ի բանիբուն գիտնոց և ճարտարաց ՚ի բերան գիտել և ասել զսա, և ցայսօր ևս կոչել զսա Յաւիտենական օրէնք բանի և ափորժակի: Որ գրեթէ վկայել իմն է, որպէս մեզ իսկ թուի, թէ յամենայն քերթողական արուեստից՝ որ յետ սորա երևեալ ՚ի բանաստեղծական աշխարհի, չիք և ոչ մի՝ որ ամենայն կարգաւորութեամբ և գեղեցկութեամբ իւրով հասեալ իցէ ՚ի ճշգրիտ վայելչութիւն և ՚ի համառօտ կատարելութիւն սորա:

Յաւուր պարգև մեծ առնելոյ ազգիս՝ թարգմանեցաք և զսա նովին հայացի չափովք ոտից որով և զՄշակականսն Վիրգիլեայ. զի և սա նովին հռովմայեցի չափովք է գրեալ: Բայց ՚ի մեկնութիւնս բնագրին չափ ևեթ ընտրեցաք մեք, որ կարևորն միայն էր ՚ի բաբուք խելամտութիւն իմաստիցն. զայն բաւական համարեալ ընդ Որատեայ մնացի քննողաց և հանճարեղ ցանկացելոց մեծամեծ օրինաց և սկզբանց արուեստիս. որ քաղցր որոճ լինիցին մտաց իւրեանց, մանաւանդ եթէ յառաջագոյն փոքր մի պարապեալ և հըմտացեալ իցեն ՚ի պարզ տարերս ուսմանս այսորիկ: Զի ուր հանճար և իմաստուն հասողութիւն մերձ ոչ իցէ, և բազում ստուաբանկարկատ մատեանք ոչինչ վճարեսցեն: Հանճարեղաց ՚ի բնէ՝ աւելորդ են, իսկ անհանճարիցն՝ անօգուտ:

Գրէ զայս Որատիոս 'ի ձև նամակի առ Պիսոնեանս երկուս եղբարս ազնուականս, որպէս Լ. Կալպուռնիոսի Պիսոնի՝ 'ի հիւպատոսական տոհմէ այր, որ նախահաւ ճանաչէր իւր զԿալպոս զորդին Նումայ Պոմպիլիոսի, որ յետ Հռոմուլեայ պայազատեաց յընտրութենէ ժողովրդեանն զարքայութիւնն հռովմէական: Քանզի երկոքին եղբարքս ընդ դաստիարակութեամբ հօրն 'ի քերթութիւն պարապէին, և մանաւանդ երէցն, Որատիոս մտերիմ նոցա և բարեկամ՝ 'ի խրատ և 'ի զգուշութիւն նոցին գրէ զայս. բայց նովին իսկ և առ յապաս եկելոցս մեզ աւանդէ զամենայն կարևոր օրէնս արուեստին:

Իսկ որ ինչ աշխատասիրութիւն եղեալ ընդ ժամանակս ժամանակս 'ի վերայ քերթածիս յարանց իմաստնոց և գիտնաւորաց 'ի քննել, թարգմանել և մեկնել, զայն և համառօտ իսկ ասել յանհնարին է՝ առանց յանչափութիւն կրթելոյ հատակի մատենիս: Բայց զերկուս զայս ևեթ կարևոր համարիմք ասել աստանօր:

Առաջին այն, զի մեծ է առ հմուտ քննիչս՝ թէ արդեօք Որատեայ իւրն մակագրեալ իցէ զսա արհեստ քերթողական կամ յաղագս քերթողական արուեստի, որպէս յիշատակի իսկ ուրեք ուրեք առ հինս 'ի Կուինտիլիանոսէ հետէ և այսր, եթէ ոչ թուղթ միայն առ Պիսոնեանս. զոր առաւել հաւանելի դատին բազումք զյետնոց, և զնիւս մակագրութիւնն սոսկ ինքնահնար գիւտ քերականաց: Այլ սակայն հաճոյ թուեցաւ և մեզ ընդ բազմաց պահել զայն:

Երկրորդ այն, զի որպէս ամենայն քերթող՝ նոյն և առաւել ևս Որատիոս 'ի քերթածի աստ ոչ զձիգ և զերկիւղած արուեստակեալ կարգ և շաւիղ ուսումնական ոճոյ ունի անտաերիւր. մանաւանդ զի և ոչ յատուկ և կատարեալ զքերթողականն առեալ է աւանդել, այլ 'ի կերպարանս մտերմական նամակի զգլխաւոր օրէնս ևեթ արուեստին իբրև առածս և պատգամս երգէ: Սակայն և յայսր ամենայնի վերայ՝ կարգ ունի յոյժ վայելուչ և զարմանալի ըստ քերթողական պայմանի. որպէս և իւրովի իսկ ակն յայտնի երևեցի որոց մանր միտ եղեալ ընթացից բանիցն քննիցեն:

Սմին որոյ և յաչս ողջամտաց յոյժ մոլորեալ համարին զգրագէտս ամենք եւրոպէականք, որպէս Յուլիոս Կեսար Սկալիգեր, Աեանն Սփիկրուն, Դանիէլ Հէյնսիոս, և այլք ամենք, որ անկարգ և խառ-

նախօս զքերթածն դասեցան երբեմն. որպէս թէ Արատոս որ ըղ-կարգն այնպէս խնամով ուսուցանէ և պատուիրէ 'ի սմին իսկ յայսմ քերթածի (տող 43), ինքն չիցէ պահեալ փոյն 'ի սմա. և կամ 'ի գաղափարողաց այլայլեալ և այլանդակեալ առնլով զոյն՝ ջա-նացան այլով իմն նորով կարգաւ դասաւորել զաստղսն ըստ միտս և ըստ քիմս, և վեր 'ի վայր հարեալ վրդովել զամենայն: Արդ ոչ այլ ինչ արարին, քան թէ 'ի զուր վատնել զժամանակ իւրեանց. և երանի թէ 'ի զուր միայն, և ոչ 'ի ծաղր ողջախոհից, որոց սիրելի է ընդ Արատեայ անզգայ երևել՝ քան ընդ Հեւնոխոսի իմաստուն, որ զանզգայութեան դատակնիք արձակէ առ որս ոչ միաձեւեալ հաւանեցին ընդ կարգն իւր:

# ԳԼԱԽՔ ՔԵՐԹՈՂԱԾՈՅՍ

ԱՄԵՆԱՅՆ մնացի ընթերցող խնդրեմ տեսանել՝ զի որպատեանս քերթուած բովանդակէ քսան և եօթն գլուխս կամ գլխաւոր սատուերս քերթութեան բանի: Բայց առ յանդիման առնել զայն միով տեսութեամբ աչաց՝ կարգեմք յառաջիկայդ համառօտեալ զիմաստս նոցին, ակնարկելով զտողսն թէ ուստի ուր:

Ա. 1-8. Ամենայն մասունք իրին զոր առեղծանէ քերթողն՝ համեմատ լինին և յարմար մէն մի իւրաքանչիւր ընդ միմեանս և ընդ բոլոր իրին:

Բ. 9-23. Մի զանմիաբանս յօդել ընդ իրեարս, և մի արձակ համարձակ թափառել, և աստի անտի զօտարոտիս կցկցել 'ի քերթածն, մինչև եղծանել և կորուսանել զպարզութիւն և զմիութիւն իրին. այսինքն է զարտուղի անկեալ օտարանալ 'ի բնութենէ իրին առաջարկելոյ:

Գ. 24-32. Զգոյշ լինել՝ մի 'ի փախչելն 'ի վրիպակէ իմեքէ՝ յայլ իմն անկանել հակառակ մոլորութիւն. այլ քաջ հասու լինել հանգամանաց կատարմանն զոր խնդրէ:

Դ. 33-38. Ոչ 'ի մասունս ինչ եւեթ քերթողութեան և քերթածաց խնդրելի է զկատարելութիւն, այլ և 'ի բոլորեան իսկ համանգամայն:

Ե. 39-46. Ըստ առնելոյ կարողութեան ընտրել զնիւթն, զի կարօղ լիցի լուսաւոր ոճով ճոխաբանել զտողսն:

Զ. 47-73. 'Ի բառս և 'ի բանս՝ սովորութեան հպատակել, և

մի՛ նորաձեւել՝ բայց եթէ առ հարկէ պիտոյից ։ Զի թէպէտ բառք չեն անմահականք, ծնանին եւ մեռանին 'ի ժամանակս ժամանակս ըստ այլոց ապականացու փոփոխելեաց, սակայն պէտքն կամ՝ սովորութիւնն է նոցին իշխան եւ դատաւոր ։

Է. 74-86. Իւրաքանչիւր ազգ քերթածաց ըստ իւրում բնութեան եւ զտաղիցն օրինակ պահանջէ, վիպասանականն, եղերականն, երգիծականն, թատերականն եւ քնարականն, իւրաքանչիւր զիւրն ։

Ը. 87-99. Քերթող անուան արժանաւորն պահեսցէ զկարգ եւ զսահման յիւրաքանչիւր ազգի քերթուածոց՝ միում միում զիւրն տալով կերպարան եւ պայման. մի՛ 'ի վսեմն նուաստանալ կամ՝ 'ի նուաստն վսեմանալ. մի՛ զողբերգականն եւ զկատակերգականն խառնել ընդ միմեանս ։

Թ. 100-118. Ոչ հերիք համարի քերթածաց գեղեցկակարգ յօրինուածն միայն, այլ պարտ է շարժել յոյզ եւ այլ կիրս. եւ ըստ կրից բանին եւ դէմքն եւ կերպարանք խօսելեացն յարմարելի են ։ Բայց պարտ է քերթողին զկիրս եւ զխօսս պատշաճել եւ ըստ իւրաքանչիւր անձին ։

Ժ. 119-135. Զընկալեալ իրս ըստ աւանդութեանն նկարագրել, իսկ զյօղեալսն՝ յար եւ նման պահել մինչեւ 'ի վախճան ։ Զի նորահնարքն դժուարին են, 'ի նախնեաց աւանդից առնուլ, բայց ազատօրէն յօրինել ։

ԺԱ. 136-152. Մի՛ մեծամեծս խոստանալ եւ փքուռն վճարել. մի՛ 'ի կարի հեռուստ սկսանել. զսկիզբն՝ զմէջն եւ զկատարածն միմեանց համեմատ գործել ։

ԺԲ. 153-177. Խնամով մտադիր լինել բնաւորութեանց իւրաքանչիւր հասակի, մանկութեան, երիտասարդութեան, արութեան եւ ծերութեան. եւ իւրաքանչիւր զիւրն տալ ։

ԺԳ. 178-187. Թէպէտ առաւել շարժեն իրք նկարագրեալք տեսեալք, սակայն մի՛ զսոսկալիսն եւ զանհաւատալիս յանդիման առնել աչաց 'ի թատերս. այլ միայն պատմել տալ ։

ԺԴ. 188-200. Մի՛ քան զհինգ հանդէս երկայնել զթատրն. մի՛ 'ի ձեռն յանկարծերեւեաց դից ուրուք հատանել զկնճիռն, այս նիւթն հրաշիւք. մի՛ աւելի քան զերիս 'ի միասին հանել 'ի խօսել. եւ պարուն՝ մի՛ անճահս երգել ։

ԺԵ. 201-218. Համառօտ համեմատութիւն նուագարանաց և երաժշտութեան և հանդերձանաց թատեր իւրոյ շայլեալ ժամանակին ընդ հնոյն պարզութեան։

ԺԶ. 219-249. Քանզի խեղկատակութիւն այծամարդաց ընդունելի եղեալ է յողբերգութեան, օրէն լցի վարել համերժ վայելչութեամբ անձանց իւրաքանչիւր։ Օլ հատարակաց իմ բանիւ պաձուձեալ պճնեցի։ Այս մի խօսս զազրութեան և թշնամանաց հեղուլ։

ԺԷ. 250-273. Բարեյարմար և քաղցրանուագ դաշնակութիւն տաղից կարևոր պիտոյ է 'ի թիւս և 'ի չափս ոտից, որում ընտրելագոյն օրինակ են հելլէն տաղաչափք, և ոչ նախնիքն հռովմայեցիք, որ անպատեհ ազատութեամբ վարեցեալք են։

ԺԸ. 274-292. Ի հելլենացւոց սկիզբն առեալ թատերգութիւնք անցին առ Հռոմ. բայց սոցա պղերգութիւն և անհոգութիւն ողորկելոյ զտաղսն՝ վնասեաց։ Իսկ որոց քաջ անուն քերթողի ցանկալի իցէ, ամենայն խնամով յղկելի և կոկելի է զտաղսն։

ԺԹ. 293-306. Քերթողութիւն ոչ կարծեալ հանձարոյ և մոլութեան եւեթ գործ է ըստ կարծեաց անմտաց, այլ և գիտութեան և արուեստի։ Վասն որոյ ուսուցանելի է՝ թէ որով պատրաստութեամբ արժան իցէ յայն ձեռնարկել. և զինչ անտի օգուտ, և զինչ 'ի հակառակէն վնաս։

Ի. 307-331. Սէ իմաստութիւն է հիմն քերթութեան, գիտել զինչ մարդն իցէ, և զինչ իւրաքանչիւր կարգի և տեղւոյ և պաշտմանի վայելչական։ Այս յայսմ իսկ Հելլէնք են արժանի օրինակ լինելոյ, որ անյագ տենչմամբ և ագահութեամբ գովութեան յառաջացեալ են քան զհռովմայեցիս 'ի փոյթ ճարտարութեան։

ԻԱ. 332-345. Ի վարդապետական քերթածս զհամառօտութիւն պատուել, 'ի զուարճականս՝ զհաւանականութիւն. և առ 'ի հաճոյակատար ամենեցուն լինելոյ՝ 'ի խրատականս խառնել ըզզուարճալին, և 'ի հեշտականս՝ զօգտակարն խոհականութեամբ։

ԻԲ. 346-364. Ընտրութիւն քերթածաց յորս առաւել իցեն ուղղութիւնք քան զթերութիւնս անխորշելիս 'ի մարդկայինս սխալաց բնութենէ՝ մանաւանդ յերկայն տաղս. և թէ պարաւելի՝ բազմախալքն միայն են։ Այս համեմատութիւն քերթուածոց ընդ նկարուց։

ժգ. 365-388. Թէ 'ի քերթութեան անտանելի է միջակութիւն կամ չափաւորութիւն։ Այլ պատճառ միջակութեան բազմաց այն է, զի կարօղն և անկարօղ 'ի քերթութիւն ձեռնարկէ. յորմէ զգուշանալի է, և մի 'ի զլանալ հանճարոյ՝ բռնի քերթողանալ կամել։ Զքերթեալսն 'ի դատումն հմուտ քննաբանի տանել ապատան և մի փութալ 'ի լոյս հանել։

ժդ. 389-405. Գովեստ քերթողութեան, և օգուտ նորին առ նախնեօքն և որ զկնի 'ի տիրապէտն քերթողաց, 'ի քաջալերս վհատելոց յերեսաց դժուարութեանց արուեստիս։

ժե. 406-416. Ոչ հանճարով միայն, այլ հանգերձ այնու՝ արուեստիւ և աշխատութեամբ լինիցի ստանալ զպարծանս այսպիսի գովելի քերթութեան, 'ի մատաղ տիոց 'ի նոյն վարժեալ։

ժզ. 417-450. Ընծատանց վտանգ յերեսաց մարդահաճոյ ունկնդրաց, և նկարագիր սուտակապաս չնթողի քերթածաց նոցին. և օրինակ ուղղադատ և արդարակորով քննաբանի 'ի դէմս Կուինտիլեայ։

ժէ. 451-475. Նկարագիր խենթահաւան քերթողի. որոյ քերթածացն չէ արժան իմաստնոց դատիչ լինել, և ոչ ջանալ փրկել զնա յարժանահաս պատուհասէ կորստեան իւրոյ։

### ԿՈՒԻՆՏՈՍԻ

# ՈՐԱՏԻԱՑ ՓԼԱԿԿՈՍԻ

## ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

### ԱՌ ՊԻՍՈՆԵԱՆՍ

ՁԻՈՅ պարանոց 'ի մարդկեղէն զօդել գլուխ
Նկարիչ թէ կամիցի, և արկանել պէսպէս փետուրս
Յամենուստ յօդեալ անդամս, որ զի վերոյն կին գեղեցիկ
'Ի տգեղ աւարտեսցի սևաթորմի ձուկըն զազիր,
Ունիցիք ժոյժ 'ի ծաղուէ մածեալք 'ի տեսն, ով սիրելիք:
Հաւատացէք, Պիսոնեանք, յոր և նման գոլ տախտակիդ

Նախ քան զամենայն առ տեղեաւս հարկ համարիմ ասել 'ի հարկանցի, զի անուն այսր բազմահաշակ քերթողիս Թարգմանեալ գտանի ուրեք ուրեք 'ի մեզ Ովրատիոս. բայց վրիպակաւ եղեալ է ոչ առաջին վանկն, որ առեալ է 'ի լատինն, վասն որոյ և փոքր ովիւ գրելի 'ի յոյնն և ոչ երկար մեծ ովիւ, և անուն 'ի մեզ փոխելի Որատիոս, կամ Հորատիոս՝ ըստ որում և լատինն հագագային առնի զառաջին վանկն:

1. Թէ զինչ գլուխ մարդոյ իմանայցէ՝ փոքր մի զինի յայտ առնէ կնոջ լինել:

3. Յամենուստ յօդեալ անդամս, իմա յամենայն ազգի ազգի կենդանեաց. և 'ի վերայ կազմանեն կին՝ իմա ըստ գլխոյ մասին:

6. Պիսոնեանք, ըստ որում ասացաք 'ի յառաջաբանին, էին երկու եղբարք ազնուականք, որդիք Կալպուռնեանն Պիսոնի, առ որս գրէ զայս Որատիոս:

Ըղձմատեան՝ ոյր էըր անուրջք խօթի մտաւ նըկարէն տեսք,
Ուր ոչ տաք և ոչ գըլուխ 'ի մի մարմին պատկանաւորք:

Նըկարչաց և քերթողաց յոր ինչ և զամ մի կամ իցէ
Եղև միշտ հաւասար համարձակել իշխանութիւն: —
Գիտեմք իսկ, և ըզդոյն հայցեմք և տամք միմեանց օձան.
Այլ ոչ թէ անհամեղք զի խառնեսցին ընդ համեղուց,
Եւ զի 'ընդ հաւս օձք զուգեսցին և ոչ գառինք ընդ վագերաց:
Վեհից ինչ ըսկըզբանց և մեծամեծս յանձն առելոց
Մի և միւս ծըւէնք կըցցի սաէպ ծիրանի մեծապայծառ
Մինչ անտառն և բագին նըկարագըրի անահտական
Եւ ընդ մարգ ծաղկազըւարճ ոլորտապատոյտ ջըռուն վըտակ,
Կամ թէ գետըն Հռենոս և կամ աղեղն անձրևածին:
Այլ արդ չէր դոցա տեղի. նոճ մի թերևս հանել գիտես,

7. Ձմատեան, իմա նախ զբանաստեղծական ինչ յօրինուած, և տայս զայլ ամենայն որ և է գրուած. զի օրինակդ առ ամենայն պատշաճի, և 'ի համառօտ քերթածի տառ, մանաւանդ 'ի սկզբանս, ոչ զքերթողութեան միայն, այլ և զբեթէ զամենայն մատենագրութեան և զճարտարութեան և զդպրուց ախորժակի սկզբունս առանցէ Որատիոս: — Մնասի տեսք կամ պատկերք են որոշատիպ ստեղծուածք մտացն խմատոց, կամ խառն 'ի խուռն կցկցեալք երբեք զերաց և զառանցանս ցնորից հիւանդի, և երբեք հրեշ իմն անկերպաւոր՝ որ 'ի բնութեան իրաց չունի հաստատութիւն. ուր ոչ սկիզբն և ոչ կատարածըն 'ի մի բովանդակութիւն կերպարանաց գան պատշաճին:

9. Ընդդիմադրութիւն է այս յերեւաց ուրումն, որ նկարչաց և բանաստեղծից հաւասար իշխանութիւն համարիցի կապակտող լինել և զամենայն օրինաց վաղել անցանել: Որում և տայ իսկ պատասխանի, թէ գիտեմք զայդ, և շնորհեմք և առնումք իսկ զայդպիսի համարձակութիւն, այլ չափով. և ոչ թէ զի 'ի բնէ հակառակ իրք և անմիաբանք ընդ միմեանս յօդեսցին, կատաղի գազանք ընդ հեզս զուգաւորեսցին, օրինակ իմն օձք ընդ հաւս, գառինք ընդ վագերս:

14. Այժմ ինչ ընդ հատ է յայդմանէ և այն՝ զի բազում անգամ 'ի ծանր և 'ի վեհ սկզբնաւորութիւն քերթուածոյ իրիք, որ մեծամեծս յանձն առեալ խոստանալ թուի, կցի յանկարծ մի և երկու կապերտ ծիրանի լոյծ առեալ փողփողեալ: Նա թէ երբ լինիցի այդ, հարցանիցես. յայնժամ, յորժամ յանդգնաբար բանաղբոսել և ընդ քարշ առնել նկարագրի Դիանայ անտառն և բագինն անահտական, 'ի բազմաց անտի մին, որ և իցէ, և զնացք ջրոց վտակաց ընդ մարգս զուարճալիս. կամ Հռենոս գետն մեծ՝ որ ընդ մէջ գաղղիացւոց և գերմանացւոց, ուր բազում նահատակութիւնք եղեն Օգոստեայ և հռովմայեցւոց. կամ ծիածանն՝ որ յանձրևաց գոյանայ ընդ ամպս երկնից, այլովք բազմօք այսպիսեօք հանդերձ, յորոց տաղակացեալ թուի Որատիոս 'ի լսելոյ 'ի քերթածս իւրոյ ժամանակին, և զնոսա կծանէ:

19. Այդպիսի բարի իցեն, այլ չէր առ դոցա տեղին. որպէս եթէ նաւաբեկեալ ոք վարձեալ զքեզ՝ աղերսել և կենդանի նկարել զիւր նաւաբեկութիւնն, և դու թողեալ զյանձնեալդ պարապիս և վեր 'ի վերոյ ինչ հարևանցիկ զայն արարեալ՝ զպամանալ իմն նոճի նկարեսցես յերևելի տեղւոջ առանձինն: Զի՞ կայ նոճւոյ և նաւաբեկութեան. հասկացաւ որ ճարտար ես 'ի նոճ նկարել. և զինչ այսր, ասիցէ քեզ ոք վարձեալն, զինչ շահ իմն 'ի նոճւոյդ: Նա զայդ յիրաւի ասիցէ. մի, զի զոր առաջին եդ՝ այնմ ոչ եհաս կենդանագրութեան աղերսիցն նաւաբեկութեան. և միւս ևս, զի զայնպիսի տախտակ նաւաբեկելոյն

Նա զինչ այդ, ուր նըկարեալն ընդ արծաթոյ վարձուց 'ի քէն
Նաւաբեկ 'ի յանդընդոց անյուսալի կայ ձողոպրեալ.
Սափորդ սկիզբըն եդաւ, զի կուժ դըրդանդ ելցէ 'ի շուրջ.
Եղիցի ազէ զոր կամիս՝ եթէ միայն պարզ ինչ և մի.

Հայր, և դուք մանկունք այդպիսում հօր արժանաւորք,
Նարուոյն կերպարանօք պատրիմք բազումք 'ի քերթողաց.
'Ի հակիրճըն ներկըրտեալ՝ լինիմ մըթին խըրթնածածուկ.
Որ 'ի նուրբըս զընէ դէմ՝ ջիլք և ոգիքըն լքանին,
Վերձիագունից զաւանեալն այտուռ փըքմամբ փըքոցուացդ,
Սողի 'նդ երկիր յոյժ անքոյթն և երկիւղածն 'ի մըըրրկէ.
Որ հրաշիւքըն ըղձանայ փոփոխել զիրըն միարուն,
Դըլփինն 'ի մայրիս կենդանագրէ՝ յալիս վարազ.
Անարուեստ փախուստ մեղաց յայլ ինչ ածէ մոլորութիւն.

Վերջինըն ճարտարաց առ Եմիլեանն համախաղարան

այսր անդր շըջեցուցեալ շարժելին զախտս ասեսանելեացն, և ազնուութիւն 'ի մէջսա իւրեանց խնդրէին. զոր ապաքէն ոչ որ առցէ 'ի սեռից նոյնոյ միոյ՝ թէ և պաճուճելոյ։

22. Այլով օրինակաւ յայտնի առնէ զանպատեհութիւն կամ զանարուեստութիւն նոցին։ Որպէս եթէ բրուտ որ սափոր մեծ և գեղեցիկ կամ Թասիոյկ խոստացեալ և սկսեալ առեղծանել, և ապա 'ի շըջել դըրդանն ելցէ կուժ մի փոքր, այսմ նման է զոր առնմա թէ մեծ ինչ սկսեալ ուրուք՝ և փոքրունս յառաջ բերիցէ, կամ այլ ինչ խոստացեալ՝ և այլ ինչ կատարիցէ։

23. Ասէ քերթողած որ զինչ և կամիցիս, միայն թէ իցէ պարզ ինչ և միարուն, մի ինչ բնութեան, մի մարմին, 'ի պատկանաւոր անդամոց յօդեալ, և ոչ յանկանուն և յանհամեմատ մասանց խառն 'ի խուռն եղջերուաքաղ, ուղտաքաղ և փղաքաղ, բառ նախանշանեալ օրինակիս նկարուն յանդգնանութեան։

24. Դարձուցանէ զգեմս բանին անդրէն առ հայրն Պիսոնեանց և առ որդիսն, յորոց երեքն մանկանց զանկանեալ էր 'ի քերթութիւն։

25. Կարծեցեալ երեւոյթն բարւոյն խաբիմք. զի կարծեմք 'ի լաւութիւն ինչ դիմել. և հասանեմք 'ի յոռութիւն։ Զոր օրինակ, 'ի համառօտութիւն ջանամ ես, և լինիմ մթին և խրթին. որ 'ի նրբութիւն կամ յողորկութիւն յղեալ և ձախորդակեալ բանից կրթիցի, ոյժ չափ նորէ կամ մաչէ. զի ջնջանէ գեղեցկութիւն բանին. որ 'ի մեծամեծս և ի վեհ մեծս առաջ զանձն, փքնու և ուռնու. որ զյապաղահոգութիւն խնդրէ՝ երկուցեալ 'ի հողմոց. ցածութէ 'ի բարձունս վերանալ, ընդ երկիր քարշի, կամ զափամնք քերթ 'ի ծանծաղս, և ոչ 'ի խորս անդընդոց սլանայ։ Իսկ որ զպարզ միութիւն իրին զանազանն փոփոխմամբք զարդարել ջանայ, որ առանց հրաշից յանարթէ լինել, օրինակ իմն՝ յանուանս նկարէ զդելփին և 'ի ծովու վարազ, այս է՝ զանհնարինս 'ի մի խառնէ։ Այսպէս անարուեստարար փախչելն 'ի մեղաց՝ յայլ ինն յոռութիւն և 'ի մոլորութիւն ածէ։

33. Վերջինն խառնան մեկնիչք լեալն բառ արուեստի, կամ բառ կայից գործարանին՝ որ 'ի կրկէսին կամ 'ի խաղէատեղն սուսերամարտից, ասացեալ Եմիլեան յանուն Եմիլիոսի Լեպիդոսի, որ առաջնորդն եկաց հանդիսից խաղուցն սուսերամարտակաց։ Արդ այն ճարտար, ասէ, թէպէտ զդրդաւանն և զփափուկ հերս և զեղնգունս կարիցէ կենդանի քանդակել 'ի պղնձի. սակայն զինչ օգուտ՝ յորժամ 'ի բովանդակ կատարմանէ ամենայն մասանց գոր-

Զեղընգունս և ըզգիւրս հերս 'ի պըղընձին ճըշգըրտեսցէ ,
'Ի կատար գործոյն յետնեալ՝ թէ չգիտիցէ զբոլորն ածել ։
Այսպիսի լինել զիս՝ թէ յօրինել ինչ հնարիցիմ ,
Ոչ կամիմ , որպէս և ոչ կեալ անհեղեղ տըձև քըթաւ ,
Սևաթոյր թէ և աչօք և թուխ գիսօք երևելի ։

Առէք , բանահիւսք , ուժոյ ձերում նիւթ 'ի կըշիռ ,
Քննելով 'ի ձիգ իմ ուսոց իցեն բերող՝ իմ հեռս ըմբոստ ։
Ում ըստ կարի իւր 'ի դէպ՝ իրն ընտրեսցի ուշի ուշով ,
Ոչ բանից յորդ աղբիւր՝ ոչ կարգ յըստակ պակասեսցէ ։
Կարգին , եթէ չխաբիմ , այս ընտրութիւն է և շընորհ ,
Զի զոր աստ այժմ է ասել՝ այժմ ասասցէ զայն աստանօր ,
Բազում ինչ յամեցուցեալ՝ յառաջիկայն թողցէ պատեհ ·
Զայս սիրեալ՝ զայն հերքեսցէ աւետաւոր տաղից քերթող ։

Նա՛ւանիկ 'ի նորատունկ բառից անգամ ուշով և ըզգոյշ ,
Ընտրականըս խօսեսցիս՝ թէ խորագէտ յեռեալ յօդուած
Ըզծանօթ ձայնին բառբառ 'ի նորալուրըս փոխեսցէ ։
Իսկ թէ նոր նըշանակօք թաքունս ինչ հարկ յայտնել իցի ,

ծոյն վերջացեալ գաանիցի ։ 'Ի յօրինելս ինչ՝ չկամիմ լինել իբրև զայն արուեստաւոր · որպէս և ոչ , թէ և այլով մասամբք մարմնոյ գեղեցիկ իցեմ , կամիմ ունել քիթ անձևաւոր և այլանդակ · զի թէպէտ և փոքր ինչ մասն եւեթ է մարմնոյ , սակայն տգեղութիւն է ։ Այս է , յիրս ինչ գովելի լինել և յիրս ինչ պարսաւելի ոչ կամիմ ։

39 · Ահա և աստ ոչ առ բանաստեղծս միայն խօսի Որատ , այլ և առ ամենայն մատենագիրս · և պատուիրէ 'ի ձեռս առնուլ նիւթ համեմատ ուժոյ իւրեանց , քննելով յերկար՝ զինչ կարող իցեն բառնալ ուսք իւրեանց , և զինչ չառնուցուն յանձն և զընկենուցուն ։

44 · Քերթողական կարգաւորութիւն մասանց ոչ ընտրականին և պատմականին հետևի կարգի , այլ բաւականն իմն արուեստաւոր իմն քերթողն հնարի իւր կարգ՝ զօրութեամբ բանին և յաջ նորատեսակին յաւելեալ յանկարծ · որ է ոչ ըստ ընտրականին՝ այլ գեղեցիկ ընթացեան նմանողութիւն , և խառնել զպիտանին ընդ անոյշ 'ի հրահանգել և 'ի զուարճացուցանել միանգամայն ։

46 · Ընտրութիւն արասցէ կարգելի իբրայն բանաստեղծ՝ որ խոստանայ կամ յաւակնկալութեանց աւետաւորէ մեծ ինչ և նշանաւոր քերթուած ։ Զի 'ի մանր ինչ առարկայս չիք այնչափ ընտրութեան անզի կամ այնր գժուարութիւն ։

47 · Զգուշացուցանէ 'ի նորահնար բառից զամենայն բանաստեղծս · և ընտիր եւս է , ասէ , այնպէս խօսել , զի ճարտարութեամբ հիւսեալ և առ իրերաց պատշաճեալ բառք՝ սովորականք և յայտնի բառքն նոր իմն առնուն և իմաստ տարեն , քան թէ նորաստեղծանել ։ Ոմանք ըստ փոքր մի երկիւղութեան ընտրողին խնամեան թէ ճարտար յաւելուածն ծանօթ գործեսցէ զնորահնար բառն ։ Բայց ոչ կիրթ թուի այդ անընդմիջարար զինի զգուշացուցանելոյն · որ զի և չէ է ասացեալ զհրաման նոր բառս ստեղծանելոյ , և զինի յարէ՝ թէ սակայն եթէ հարկ լինիցի համեմատել ինչ այնպիսի փառն նորագիւտ իրաց , որէն է և զայն առնել ։ Զդոյն ուսուցանէ և Արիստոտել 'ի քերթողականին իւրում ։

Անլուրս հանգուչն հանգրինելոց բառեղծմանէ Կեթեգեանց
Եթէ դէպ, և տացի չափով առեալ ազատութիւն։
Եւ նորք և դեռածինք վաւերական լինիցին բառք,
'Ի հելլէն թէ յաղբերէ գոյզն 'ի խոտոր անկանիցին։
Զի՞նչ իցէ զոր Պղաւտոսի և Կեկիլեայ շնորհէ Հռոմն
Եւ արգել կարճեաց երբէք 'ի Վիրգիլէ և 'ի Վարեայ։
Սակաւուց ինչ թէ 'ի գիւտ է ինձ լինել՝ էր յաչաղեմ,
Ուր Կատոնի և Ենինեայ լեզուն ըզխօսսըն հայրենի
Ճոխացոյց և նորանոր անուանս իրաց մատոյց 'ի մէջ։
Էր օրէն և միշտ լիցի ձայն նորաթէք բերել 'ի լոյս։
Որպէս մայրեաց փոփոխին տերեւք ընդ ամըս գլորասահ,
Հինք թափին, այսպէս բառից անցեալ գնայ զառամ հասակ,
Եւ զօրէն պատանեկաց ծաղկեն առոյգ արդի ծընեալք։
Նուիրեալ կամք 'ի մահ՝ մեք և մերքս ինչ 'ի միասին.
Թէ առեալ ծովն 'ի ցամաք առ 'ի նաւաց պահէ զհիւսիս,
Գործ արքունի, և յերկար ամուլ ճահիճ թիոց 'ի դէպ

51. Եւ այնպիսի հարկի 'ի դէպ իցէ առեղծանել նոր ձայնս անլուրս Կեթեգեանց վաղնջական ազգատոհմի, որ առանձինն ինն գօտեւորս ասին ունել և համգրինալ պատմուճան : Խսկ բառս անծանօթս նախնի հռոմայեցւոց : Եւ այսպիսի բառք առաւել ընդունելի լինիցին, եթէ 'ի յոյն լեզուէ առցին՝ փոքր մի խոտորելով և յարմարելով յատկութեան և որոնաց հռովմէական բարբառոյ : Զի յոյն լեզու գրեթէ հասարակաց ծանօթ էր հռոմայեցւոց, մանաւանդ գիտնոց, և ընտանի լսոյն բարբառոյ և ազգախառնեալ 'ի նա : Այսու ուսուցանէ Որատիոս և այլոց լեզուաց թէ զինչ արժան իցէ առնել յայնպիսի պէտս կարեւորս :

53. Ընդէր իցէ հռոմայեցւոյն շնորհել Կեկիլիոսի և Պղաւտոսի հին քերթողաց զազատութիւն առեղծանելոյ նոր բառս 'ի նոր պէտս, և զլանալ սոյա զոյն այժմուցս Վիրգիլեայ և Վարիոսի : Եթէ կարեմ և ես սակաւ ինչ նոր ստացուած գտանել, ընդէր նախանձու բամբասիմ, մինչդեռ նախնիքն՝ Կատոն և Էննիոս քերթողք՝ կարացին նորանոր բառիւք ճոխացուցանել զլեզուն հայրենի : Արդ որպէս յայնժամ, նոյն և այժմ միշտ օրէն է նորահնար բառս առեղծանել առ հարկի իրացն :

62. Թող զայդ, նոյն իսկ սովորական և ծանօթ բառք յետ երկայն ժամանակաց փոփոխին. առաջինքն հնանան և խափանին և այլք 'ի տեղին յաջորդեն. և լինի այս յամենայն կենդանի լեզուս :

65. Զաւեանեան լիճն խնամոյ, զոր խառնեալ ընդ հռովմէական նաւահանգըստին և ընդ ծովուն և ամբարտակաւ ամրացուցեալ՝ նաւահանգիստ մեծ կազմեաց Օգոստոս կայսր, և նմին իրի գործ արքունի կոչէ : — Ամուլ ճահիճն էր լճակ մի նաւարկելի երբեմն, պոմպէական կամ պոնտական անուանեալ. որում յետ արկեալ զաչտառոյց Կեթեգոս անուանն, և այնուհետև արօրադիր եղեալ տայր արդիւնս : — Իսկ գետ մնասակար երբեմն անդաստանաց էր Տիբերիս, որոյ յառաջն ընդ այլ ձեռափոր անցեալ ողողանէր և աւերէր զզաւառս. և արդ Օգոստեայ հրամանաւ փոխեցաւ յայլ յառաջ՝ ընդ որ անվնաս անցանիցէ, յորում և կայ մնայ մինչև ցայսօր : Այսպիսի հաստատուն և յաւիտենական իսկ կարծեալ գործք մարդկան յաւուր միում կործանելոց են, թող թէ փոփոխական յօդուածքն և թեթև ընդ օդս ցնդելի բարբառք, որ ըստ պէտս պէտս անկանելոց են և յառնելոց :

Կրելով ըզծանր արօր ըզմօտաւոր կերակրէ շէնս,
Լաւագոյն ուսեալ շաւիղ թէ գետ զընթացըս իւր փոխեաց
Օտարոտն եղեռնաւոր, կորիցեն գործք մահկանացուք,
Թող թէ պատիւ բարբառոց և շնորհ կացցէ յաստիս յուժի :
Որ անկեալքն են շատք անդրէն կենդանասցին, և շատք անկցին
Որ արդ կան 'ի պատուի բառք, թէ այնպէս ինչ հաճեսցին պէտք,
Նա՝ որում են դատաստան՝ օրէնք խօսից և իրաւունք :

Արքայից զօրավարաց գործք քաջութեան և մարտք ահեղք
Թէ որով չափովք ոտից եղեն 'ի վէպ՝ եցոյց Հոմեր :
'Ի տաղից անհաւասար զուգելոց նախ եղերք երգոց
Եւ ապա բերկրապատար սրտից իմաստք պարագրեցան :
Իսկ ո՛ հայր և առաջնորդ եղերերգուաց մրմունջ ձայնից,

74. Թէ որով ոտիւք տաղից գրելի իցէ դիւցազնական վիպասանութիւնն, յորում վիպել առնու քերթողն զգործս քաջութեան և զահեղ մարտս դիւցազին ուրուք. եցոյց Հոմերոս՝ անզուգական և գրեթէ միայն կատարեալ դիւցազներգակ որ գրեաց զԻլիականն և զՈդիսականն քերթուածս իւր վեցոտանի չափովքն հելլենացւոց : Զնոյն արարին և այլք որ զհետն եկին քերթողք, ոչ միայն հելլէնք, այլ և հռովմայեցիք, որ յամենայնի նմանողք գտան Յունացւոց. որպէս Վիրգիլիոս յիւրում Էնէականին, որ միայն արժանին է 'ի նախնիս զհետ Հոմերի թողուլ : Այսու յայտ առնէ Որատիոս, թէ դիւցազնական քերթածն մեծագոյն և վեհ չափովք է գրելի, զոր և ընկալան իսկ ամենայն լեզուք, որպէս և բնութիւնն ինքնին ուսուցանէ : 'Ի մերոցս պատշաճագոյն թուի 'ի վիպասանութիւն ազատօրէն քառատողեան նախնեաց 'ի քառավանկ առարկեալ անյանգ վերջիւք, զորմէ լինել խօսել եմք 'ի յառաջաբանի Մշակականաց Վիրգիլեայ : Եթէ և զնոյնայանգ յաւելուլ ոք յայն կամիցի, ոչինչ հակառակիմք որոց սիրելի են զգեղութեան կապանս, միայն զի թէ հնար ինչ իցէ՝ ըստ արժանի յանգք իցեն ընդարձակ բառից իմաստիցն, և ոչ աղքատական նմանաձայնութիւնք կամ օտարոտի բանդագուշութիւնք : — Այլ և մեծագոյն չափովք գրեցին հելլէնք և հռովմք և զվերջապետական քերթուածս, որպէս զՄշակականն Վիրգիլեայ և զքերթողականն Որատեայ, և զամենայն քերթած փոքր մի ընդարձակագոյն : Իսկ 'ի մանունց՝ զհովուերգութիւնս, յորում գերազանց քան զամենեսին է Թէոկրիտոս յոյն և հետեւող նմին Վիրգիլիոս :

76. Եղերերգական տաղն, որով նախ զողբս արտասանէին երգեցին և ապա զուրախականս ևս, առ Յոյնս և Հռովմայեցիս 'ի տուն տունս բովանդակէր երկատողս, որոց առաջինն է վեցոտանի, երկրորդն հինգոտանի. այս է տաղն՝ անհաւասար զուգեալ տողս : Յեղերերգակ քերթողս որ կան 'ի նախնեաց՝ գերազանց քան զյունաացն է Տիբուլլոս հռովմայեցի, զի հելլենականքն չեն 'ի միջի : Նա այս տաղս և առ այլազգիս ազատ են մեզքն 'ի կիր առնուլ զոր և է պարզ և խառն ազգս չափոց : Իսկ ձայնաւորութիւնք ուժեղ արուեստականութիւն թուին 'ի տաղս արամայից և ողբանուաց արուի : Մակայն ընտրեսցէ որ որպէս և ախորժէ 'ի հանդէսոտ քերթածոց :

78. Եղերերգուաց մրմունջ ձայնս՝ զնոյն նախատացեալ եղերերգութենէն ասէ, որոյ ոտից գտողն կամ հանդիսացուցիչ չէ յայտ հաւաստեաւ, որպէս դիւցազնականին Հոմերոս, թէպէտ և ոմանք զԱրխիղոքոս կոչնտեալ առնեն լինել : Եւ միայն կամ մանր և նուրբ առէ զեղերերգութիւնն վասն անառութեան իմաստիցն և կարճութեան բոլոր տաղիցն, և վասն երկրորդ տողիցն կարճութեան, որ որպէս տատասկ՝ չեն վեցոտանիք իբրև զառաջինսն, այլ հնգոտանիք :

Մաքառին քերականք, և տակաւին վէճն 'ի դատ կայ ։
Ի յիւրն 'ի մեծավէրջ զԱրքիլոքոս զինեաց զայրոյթ .
Զնոյն ոտն ընկալան կատակերգակք և ողբերգակք ,
Որ 'ի դէպ զրուցատրութեան և յարադրուած իրաց ծընեալ ,
Նա յաղթական շըշընջմանց բազմաժողով հրապարակին ։
Ի քնար և 'ի տաւիղ ետ Մուսա զդիս և զդիւցազունս
Նա զյաղթօղ բռնամարտիկն և զերիվար դուպարայաղթ
Նա ըզգութըս պատանեաց և զհամարձակ նուագել զգինիս ։

Զպայմանեալ յեղանակս և զքերթածոց պահել զերանգս
Թէ չկարեմ կամ թէ չգիտեմ՝ ընդէ՞ր քերթող ես ողջունիմ .
Զի՞մ ընտրեմ թիւր ամօթով անգիտանալ քան ուսանել ։
Կատակաց իրք չառնուն յանձն ոգել տաղիւք ողբերգական .

80 . Մեծավէրջ ոտն է երկավանկ , առաջինն սուղ՝ երկրորդն երկար . զոր հնարեցաւ , ասեն , Արքիլոքոս հնաւուրց քերթող , և նովին գրեաց զերգիծաբանութիւնս իւր առ զայրացմանն ընդդէմ կնոջ իւրոյ և աներոյն Լիկամբեայ ։ Բայց կէսք ստուել հաւանեցուցանեն զի–րն ոչ վասն հնարելոյն իմանալ , այլ վասն յինքն սեփականելոյն զայն ոտն և յաճախ և քաջ 'ի կիր արկանելոյն , որպէս Հոմեր զվեցաչափն . զի ասեն թէ կային մեծավէրջական չափքն և յառաջ քան զԱրքիլոքեայ բարկութիւնն ։ Զնոյն ոտն ընկալան և ողբերգակք և կատակերգակք , իբրև յարմար 'ի խօսակցութիւնս թատերաց և 'ի գործողութիւն , և ուժգնութեամբ ձայնին բաւական 'ի յաղթել շշնջմանց բազմութեան ժողովելոյն 'ի տեսիլ խաղուցն ։ Իսկ թէ այս ո՞րպէս , զժուարաթարգմանելի է մեզ այժմ ։ 'Ի մեզ պատեհագոյն թուի 'ի թատրը և նմանագոյն աշխուժից մեծավէրջին՝ ապառողէն քառանդամն նախնեաց եռավանկ սապատեալ վերջիւք , զորմէ ասեմք , կեալ եմք 'ի ծանօթութեան (7) յառաջաբանի Մշակականացն Վիրգիլեայ . թէ ախորժէ ոք՝ յաւելցէ և 'ի սոյն զձայնայանգս . թէպէտ և ոչ յայժ 'ի դէպ ինչ թուի մեզ այդ 'ի բնական զրուցատրութիւն կրից թատերաց , մանաւանդ կատակերգութեան ։

84 . Քնարական քերթութեան նիւթ են երգոց Մուսա աստուածուհի տաղից՝ զգովեստս դից . դիւցազանց . բռնամարտաց և երիվարաց յաղթողաց յասպարէս մրցմանց . որպիսի են տաղք Պինդարոսի և ոմանք Որատեայ՝ գերագոյն քնարերգակաց . և զսէր տարփից պատանեաց և զզուարթութիւն և զազատագէմ գինեբրուս . և զայլ եւս այսպիսի մանր նիւթս զուարճալիս և սիրականս . որպէս են , օրինակ իմն , տաղք Անակրէոնի և Կատուղլոսի և ոմանք Որատեայ , որ և երկքեան իսկ անզուգականք են յայսմ կարգի ։ Քնարական քերթութեան ոտք և չափք զանազան են առ Յոյնս և Հռովմայեցիս և առ ամենայն ազգս . այլ և խառն իսկ վարին 'ի սոսա սոսա ։ Նոյն ազատութիւն է և առ մեզ , որում և օրինակք բազում են 'ի նախնեաց և յարդեաց՝ անյանգ և յանգիւ որ յայս ազգ քերթութեան առաւել 'ի դէպ թուի ։

87 . Վասն զի պայմանաւոր եղանակք և իւրեանց տեսակաց երանգք են և կերպարանք իւրաքանչիւր ազգի քերթածոց , և անձնիւր իրաց յարգի անդ , և միոյ միոյ մասանց իրաց , և բնաւ իսկ ամենայն իմաստից և ասացուածոց ըստ տեղեաց տեղեաց և ըստ դիմաց խօսելեաց . որում պարտի միտ դնել քերթողն և ըստ այնմ յարմարել զայդ ոտանաւորին և զօրինակ ոճոյն և զհանգամանս . ապա թէ ոչ՝ չէ արժանի անուան քերթողի ։

90 . Չառնուն յանձն , թէ ըստ փոքր մի զանազանութեան ոտիցն , և թէ ըստ վեհմական ոճոյն ։ Զի թէպէտ և կատակերգութիւն և ողբերգութիւն մեծավէրջիւք չափէին , որպէս ասաց յառաջն , սակայն գոյր խտիր . զի էր ինչ ոտն՝ որում ա_

Սոսկական և արժանի կատակերգակ ոտից նուագօք
Ի զայրին թէ վիպեսցին Թիեստեան կոչունք ընթրիք:
Պահեսցեն իւրաքանչիւր ընդվիճակեալ կարգ վայելուչ.
Բայց սակայն ամբառնայ և կատակերգ երբեմն զձայն
Եւ ուռուցիկ բերանով կագի Քրեմէս ծանրացասումն,
Եւ հետևակ մնչէ բանիւ բազում անգամ ողբերգակ:
Պելէոս և Տելեփոս վտարանդիքն և տառապեալ
Մերժեն երկոքեան զփուքս և զբառս կանգնաւորս,
Թէ փոյթ վայելչին առնիցեն շարժել զսիրտ լսողացն:

Ոտերթածաց չէ բաւական գեղեցկութիւն, լիցին քաղցունք,
Եւ զոգի ունկնդրողին յոր և կամին առեալ ածցեն:
Որպէս խնդացն ընդ խնդացող՝ նոյն ընդ լացող լան դէմք մարդկան.
Արտօսր յինէն թէ խնդրես՝ նախ քեզ վայել է սուգ ունել.
Յայնժամ քոյդ աղէտք հարցեն զիս Պելէոս դու կամ Տելեփէ.
Զանկարգ անճահ թէ խօսիս՝ ծիծաղեցայց կամ նիրհեցից:
Թախծագնինն դէմ են տխուր, սրտմտելոյ՝ սպառնալից ձայնք,
Խաղացելում՝ ցնծալի, ծանրաբանին՝ լուրջ և ըզգօն:
Զի բնութիւն նախ ընդունի առ ամենայն բախտի պայման

ռաւել վարկր ազատօրէն կատակերգակն 'ի մեծամեծ բրիտանական չափս իւր քան զողբերգակն. և զի 'ի նմին չափոն խակ հանդամանք դարձուածոյ ոճոյն զանազանեն:

92. Թիեստէս էր եղբայր Ատրէոսի. և անկեալ ընդ կնոջ նորա Եղոպեայ՝ ծընաւ երկուս կամ երիս որդիս, զորս առքէն վրիժուցն սպանեալ Ատրէոսի՝ եառ 'ի կերակուր Թիեստեայ, և զարիւն նոցա խառնեալ ընդ գինւոյ՝ եառ ըմպել նմա. յորմէ սոսկացեալ, ասեն, արեգական յայնպիսի վրիժագործութենէ՝ դարձուց ընթաց, զի մի տեսցէ զեղեռնն: Արդ, որպէս իմն, այս նիւթ ողբերգական ոչ էրէ՝ թէ կատակերգակ ընդելական ոտիւք և ոճով ճառեսցի:

94. Սակայն և ուրեք՝ զի և կատակերգութիւնն բարձր և վսեմ ոճով խօսի ըստ ամբաւոյն. որպէս Քրեմէս կարի արտամեալ առ Տերենտիոսի ճառսն կատակերգակի: Եւ ողբերգակն երբեմն միջակ և ընդելական խօսի ոճով. որինակ իմն, Պելէոս յաքսորս և Տելեփոս աղքատացեալ՝ զմեծամեծ և զուռուցիկ բառս մերժեն, եթէ ողբալովն կամին շարժել զսիրտս ունկընդրաց: Պելէս կամ Պելէոս Եակեան որդին և հայր Աքիլլեայ՝ սպանեալ զեղբայրն զՓոկոս, տարաժամանն եղեալ էր 'ի հայրենի աշխարհէն յԵղգինայ, և 'ի Թեսալիա խնդրահալած շրջէր: Տելեփոս որդին Հերակլեայ արքայ միւսացւոց՝ վիրաւորեալ յԱքիլլեայ, և 'ի պատգամաց լուեալ թէ չէր այլ դարման վիրացն, բայց եթէ նովին տիգաւն Աքիլլեայ շփեսցի, յաղքատի և յաղաչաւորի կերպարանս մտեալ առ Աքիլլէս 'ի բանակն խնդրել բժշկութիւն:

100. Յայս վայր աւանդեալքն 'ի գեղեցկութիւն քերթածոց հայէին, այլ չէ շատ՝ գեղեցիկ միայն լինել վայելուչ կարգման և յօրինուածով. լիցին և քաղցր, այսինքն շարժողական, հոգեշարժ, սրտահաճոյ, բարոյացուցական, զգայական և խանդաղատելի, որ զսիրտ և զոգիս լսողին շարժեսցեն յոր կողմ և կամիցին՝ թէ 'ի յօրինուածս անդ քերթածին, և թէ յարտասանութեանն 'ի թատերս, որպէս և բացայայտէ զինի:

Ձեւերեալ ըզմեզ բերկրէ, կամ թէ գըրգռէ 'ի բարկութիւն,
Կամ յերկիր ծանրաթախիծ սըզմալ հակէ տառապագին,
Ապա լեզուին թարգմանաւ ըզկիրս հոգւոյն բերէ 'ի դուրս։
Եթէ բանք խօսողին չիցեն բախտին իւր համեմատ,
Սեպուհք հռովմայեցիք և ռմկըբոլք բարձցեն քըրքիջ։
Խըտիր մեծ է թէ տորուկ և թէ դիւցազն ոք խօսիցի,
Ծեր հասուն, թէ ծաղկափթիթ տիօք աշխոյժ երիտասարդ,
Եւ տիկին տիրուհի, եթէ դայեակ ոք ժըրաջլուխ,
Թանգար ասպանդական, թէ բուսաբեր անդոյ մըշակ,
Ասորի, եգերացի, յԱրգոս սընեալ թէ 'ի Թեբէ։

Կամ համբաւոյն հետևեա կամ թէ պատեհս յօդեա, քերթող.
ԶԱքիլլէսըն փառացի եթէ յատեան երբէք հանես,
Անձեհեր, բարկասիրտ և ամեհի և անողոք՝
Ոչ օրէնս իւր գիտիցէ, յոյս զամենայն դիցէ յիւր զէն։
Մեդէ լիցի անողորմ և աներկիւղ, Ինով ողբալի,
Նենգաւոր Իքսիոն, Յով թափառաստ, տըրտում Որեստ։
Թէ անփորձ և անսովոր ինչ ընծայես 'ի տեսարան,

118. Եգերացին է կոլքիսեցի, որպէս յայտ է։ Արգոս էր գաւառ և քաղաք Պելոպոնեսոյ. Թեբէ մայրաքաղաք Բիովտիոյ։ Թէ և 'ի նմին ազգէ իցեն խօսողքն, որպէս հելլենացի, սակայն և այն ևս խտրելի է՝ թէ յորմէ գաւառէ կամ քաղաքէ. զի բառ այնմ ևս փոփոխումն բարուց և ոճոյ երեւի։

119. Եթէ յաւանդութենէ հին մատենից առեալ ինչ է զոր քերթեսն, կամ ընկալեալ համբաւոյն հետևեսցիս, կամ յարմարականս ինչ իւրն առեղծցիս։ 'Ի համբաւոյ աւանդութեան օրինակ առցես զհետագայ անուանսդ։ — Աքիլլէս յայտնի է 'ի համերական քերթածոյն, բառ օրում համառօտէ իսկ աստ զնկարագիրն։ — Մեդէ կամ Մեդիա էր կին Յասոնի առաջնորդին նաւորդաց, որ 'ի փախչելն 'ի հօրէն սպան զԱպսիրտոս զեղբայր իւր կրտսեր, և ապա յարհամարհելն 'ի Յասոնէ՝ սպան առաջի նորա զամենայն որդիսն իւր։ — Ինով էր դուստր Կադմեայ, որոյ փախուցեալ 'ի ժանտութենէ առն իւրոյ Աթամանտեայ ասպարայի թերացեալ՝ առ ցաւոցն արկ զինքն և զորդին իւր Մելիկերտ 'ի ծով, և փոխեցաւ ինքն 'ի Լևւկոթէէ կամ Մատուտա աստուածուհի, և որդին 'ի Պալէմոն դիս ծովու, որ և Պորտումնոս կամ Պորտունոս ասի։ — Իքսիոն էր արքայ Թեսաղիոյ, որ նենգաւ ըսպանեց զԴեյոնէոն զաներ իւր 'ի գուբ հրեղէն և կորոյս, ապա յանդգնեցաւ խարդաւանել 'ի սեր իւր և զՀերա աստուածուհի՝ զկին Արամազդայ։ — Յով դուստր էր Ինաքայ արքային արգոսացւոց կամ արգիւացւոց, սիրեցեալ յԱրամազդայ, և առ քինուն հերայ փոխեալ յերինջ. և 'ի բազում չխթեալ և մոլեգնեալ՝ թափառական շրջեցաւ մինչև յԵգիպտոս, ուր անուանեցեալ ապա ընդ Իսիդիւ՝ փոխեցաւ և եղև խիս աստուածուհի։ — Որեստ էր ուստր Ագամեմնոնի և Կլիտեմնեստրայ, որ 'ի վրէժ անարգանաց և մահու հօրն՝ սպան զմայրն և զհամանին նորա զԵգիսթոս, բայց 'ի խղճէ մտացն, կամ բառ աւանդելեացն՝ 'ի դժոխականն դահճացն 'ի կատաղեաց ամենեցուն տրտում և սգաւոր էր, և մոլեգնեալ իսկ 'ի թատերս ձևանայր։ Այսպիսի մնայցաւումն աւանդից օրինակք։

125. Իսկ թէ անծանօթ ինչ և նոր դառեղծանիցես, ծագէ 'ի ծագ քերթածիդ միօրինակ պահեսցի զրոյցն և արժանք նը-

Եւ դէմս ինչ նորագիւտ կերպարանել համարձակիս ,
'Նոյն նման պահեսցի միշտ՝ 'ի սկզբանէ ցկատարած :
Դժուարին հասարակացն է տիրապէս ստեղծաբանել .
Լաւ իցէ զԻլիականն արկանել քեզ տաղս 'ի հանդէս ,
Քան անլուր 'ի մէջ բերել և անծանօթս յառաջագոյն :
Որ ինչ նիւթ աշխարհական՝ քեզ սեփական ինչ եղիցի ,
Յարհամարհ 'ի բացերև գու սահմանին թէ կացցես ոչ ,
Ոչ թարգման հարազատ բառ ընդ բառի փոխել տացես ,
Ոչ 'ի կիրթ նմանութեան վարեալ անկցիս յանձուկ ուրեք ,
Ուստի ելս ոչ ներեսցէն ամօթ և կամ գործոյն օրէնք :

Մի՛ որպէս պարբերական քերթողն երբեմն ըսկըսանիր .

կարագրին՝ զոր միանգամ 'ի սկզբան ար-
ժանեցեր 'ի նմա :

128 · Ցերբս մեաս առնուն մէնինջ զա-
ռացեալ [illegible] : Մի՛ զենգ հանուր ինչ
և տարապ նկարագիրս , ամենեցուն կամ
ազգի մարդկան առ հասարակ պատշա-
ճեալս : Երկրորդ՝ զառ 'ի յայլոց ստեղ-
ծեալս և զյառաջագոյն ասացեալս : Եր-
րորդ՝ զոչ ուրուք առակաւին քերթեալս և
ինքնահնարս : Ցոր միաս և ազգի հասարա-
կացն , զերկուսին օրինակս եա զժուարին է
տիրապէս քերթողաբանել , այսինքն իւրե
յատուկ և սեփական ինչ քերթեալ ան-
ձինն կամ քերթողին : Բայց յորոց զկինն
յարէ՝ թուի թէ առաւել ըստ երրորդ մը-
տաց առեալ է յՈրատեայ հասարակացն ,
ըստ որում ասէ իսկ , թէ լաւագոյն է ըղ-
ծանօթ Իլիական վէպսն համբաւականս առ-
նուլ քեզ ողբերգել , քան նորս ինչ և ան-
ծանօթս ամենեւին յառաջ բերել . և թէ՝
յայլոց ասացեալ ծանօթ իւն քեզ սեփա-
կան ինչ եղիցի , եթէ ոչ 'ի կանխաւ սահ-
ցելոցն սահմանի ընեռեալ կացցես կամ
թարգմանիչ լինիցիս , այլ նորս ինչ 'ի վե-
րայ ծանօթականն իրացն ստեղծանիցես :

134 · Ցեա եա՛ մի առ երկիւղած և հա-
ւատարիմ նմանութեան և անխոտոր մեա-
ցյ յենեալ սատանգիւղ սահմանի , որ
չմայլել քերթողի , անկցիս եա 'ի նեղ ու-
րեք , ուստի ելս ոչ տացեն քեզ ամօթ և
կամ օրէնք գործոյն : Խմա՛ ոչ կարասցես
ոչ յառաջ երթալ յաղթահարելով առ ան-
ձնագործ անձուկ տագնապին և ընդդէմ
եղանելոյ օրինաց և բնութեան ձեռնարկ-
եալ գործոյդ , և ոչ յետս դառնալ առ
ամօթոյ տեղութեանց մասն և տուր և
գուշակեինեղոյ : Նա եթէ բուռն արարեալ
զփորձ և է օրինակաւ ելս ինչ գտանել մար-
թասցես ըստ քո խելացդ , սակայն և այն-
պէս ծաղու կացցես նշաւակ :

136 · Զպարբերական կամ ներշրջական
քերթողս ըստ երբս յեղանակս խմանան
մէնինջ : Նախ՝ որ զպատմութիւն ինչ
'ի սկզբանէ մինչև ցկատարած իւր կարգաւ
իւրև ծայրէ 'ի ծայր շրջան առեալ պատ-
մէին 'ի չորս իմն մանր մանր քերթուա-
ծոց՝ որում և անուն կարգային պար կամ
շրջան միապատան 'ի մի քերթուած գումա-
րեալ : Երկրորդ՝ որ ըստ օրինակին Հոմե-
րի զիրս տրովականս պատմերգին , կամ
զոր փոքր մի յառաջ և զինի , 'ի չափաւոր
իմն շրջանի կամ սահմանի պարագրեալ
երգեին : Երրորդ՝ որ շրջաբերական քեր-
թածս նուագեին 'ի պարս տիկնոց : Նիւր-
եա մարթ էր յաւելուլ և չորրորդ մի , որ
երգեին զիրս բոլանդակելով 'ի խնկարգիր
մասունս ասեղ , որոյ միապատմական շրջան
կոչէր անուն նորա , և ունէր զամենայն
հնոյն առասպելաբանութեան աստուածութիւնս :
Մի 'ի սոցանէ , և հաւանական յառաջնոյ
կարգէն է և Մէշտանակեալ տատանոր , որ
զկործանումն մեծն Տրովադայ գնէ : Բայց թէ յե-
մի յՈգիւղոսութեան կրասեփոյն Նեոպտո-
ղեմայ (գլուխ Զ) . Հեսիոդոս քերթողի համա-
րի զայդ , այլ Անտիմաքոսի ուրուք շըր-
ջաբերականի . զոր և ծաղր առնէ Որատ
հաշակաւոր առակաւ երկնեցն լերինն և
ծննդեան մկան ծաղրականի . որ առ նը-
սա ամենեւին պատշաճի՝ որոց մեծամեծս
վերացեալ խոստանան , և ոչինչ կամ չնչին
ինչ մատուցանեն : Որպ զգուշելի է և այս , զի պա-
տառ գոչումն 'ի յառաջին բնագրին թէ ըստ

« Ըզ Պրիամեան երգեցից բախտ և զմեծապանծ ճակատամարտ։ »
Զինչ պարծօղդ այդ արժանի այդքան պոռոտ բերցէ զոչման.
Երկնեսցեն լերինք յերկունս և ծնցի մուկըն ծաղրալից։
Քանիւն վայելուչ եւ՝ այն որ ոչ ինչ նիւթեալ անդէպ.
« Զայրն ասա, Մուսա, ինձ՝ որ յետ աւուրց առման Տրովայ
Ըզբազում որերոյ ետես ըզբարս և ըզքաղաքս։ »
Ոչ ծուխ 'ի փայլականց, այլ 'ի ծխոյ հնարէ տալ լոյս.
Զի սքանչելիս զարմացման բերցէ 'ի վեր այնուհետև,
Զ Անտիփատն և զՍկիւլլայն ընդ Կիկլոպայ և զԽարիբդիս։
Ոչ ըզդարձ Դիոմեդեայ 'ի մահուանէն Մելէագրի,
Ոչ ըզմարտըն տրովական 'ի յերկուորեակ ձըւոց հիմս։
Միշտ 'ի կէտն իւր փութացեալ և զունկընդիրն յափըշտակէ

զոչման մեծախօս ձայնիցն խմանի. և թէ ըստ հագագային հատածին cantabo et. զոր չէր մարթ և ոչ հարկ ինչ նոյնպէս առնել և 'ի հայում. այլ փոխանակեցաք ընդ այնր զյաճախութիւն բերանաբաց այբ տառին։

140. Այն որ ոչինչ նիւթէ անճահ՝ Հոմերոս է, որոյ Ոդիսականին սկիզբն են երկոքին տողքս թարգմանեալք յՈրատեայ համառօտելով և զերիս տողսն Հոմերի յերկուս ամփոփելով։

143. Պոռոտախօս սկզբունք որ յետոյ յոչինչ լուծանին, նման իմն են բոցոյ յարգի՝ որ առաջ ծուխ միայն հանէ. իսկ հանգարտ և անպաճոյճ սկսուածք իբրև մեղմով իմն ծխին նախ, և ապա բոց մեծ արձակեն 'ի լուսաւորել և 'ի ջեռուցանել։ Այսպիսի են մեղմական և զգօնական սկզբնաւորութիւնն Հոմերի, որ և հանէ իսկ ապա 'ի լոյս զփչառակեալ սքանչելիս. որինակի աղագաւ, զԱնտիփատ արքայ Լեստրիգոնաց զմարդակեր, որ լափեաց զմի յընկերացն Ոդիսեայ, զՍկիւլլա և զԽարիբդիս՝ զերկոսին քարաժայռս 'ի սիկիլեան նեղցին, զառասպելեալսն 'ի կին մարդ կամ 'ի խառնակերպ հրէշ. զՊոլիփեմոս Կիկլոպեան՝ զհսկայն միականի և զահաւոր, որ ծախեաց զվեցեակն ընկերս Ոդիսեայ յայրի անդ իւրում, ուստի հազիւ ճողոպրեցան այլքն խորագէտ հնարիմացութեամբք. և այլս յոլովս զորոց չէ անդէպ երկարել։

146. Դիոմեդէս մի 'ի դիւցազանց տրովական մարտին, էր որդի Տիդեայ և թոռն Իինէոսի արքայի Կալիդոնայ. իսկ Մելէագր կամ Մելէագրոս էր հօրեղբայր Դիոմեդեայ, և սպանաւ 'ի Կուրետեանց կամ Կուրեացոց 'ի պատճառս կալիդոնեան վարազին։ Արդ ասէ Որատ, թէ ճարտար քերթողն առ 'ի վիպել որինակ իմն զդարձն Դիոմեդեայ 'ի տրովական պատերազմէն 'ի տունն՝ ոչ սկսանի 'ի մահուանէն Մելէագրի հօրեղբօր նորա, 'ի կարգ իմն վերուստ և հեռուստ, որպէս կարծի արարեալ Անտիմաքոսի քերթողի։

147. Լեդա դուստր Թեստիոսի արքայի Կալիդոնայ յղացեալ յԱրամազդայ, որպէս առասպելեն, ծնաւ ըստ ոմանց ձու մի, յորմէ ելին երկուորեակք Հեղինէ կամ Հեղինէ և Պոլիդևկէս. ըստ այլոց երկուս ձուս, յորոց 'ի միոյն ելին Կաստոր և Պոլիդևկէս, 'ի միւսմէն Հեղինէ միայն կամ Հեղինէ և Կղիտեմնեստրա։ Այս Հեղինէ որպէս յայտ է, առեւանգեալ 'ի Պարիսէ տրովացւոյ պատճառ եղև տրովական պատերազմին։ Արդ երկրորդ որինակաւս ևս ասէ Որատ, թէ ճարտար քերթողն իբրև զՀոմերոս՝ զտրովական պատերազմն ոչ սկսանի 'ի ձուոց ասածի երկուորեկաց, կամ որ նոյն է՝ 'ի ծննդենէն Հեղինեայ, այսինքն կարգ իմն 'ի վերուստ և 'ի հեռուստ։

148. Վիպասանն քերթող, նոյն և թատերականն, ոչ 'ի ծայրէ կարգի սանձեալ վիպացն սկսանի զքերթուածն իւրև պատմական որինաց, այլ 'ի նպատակն իւր արագելով անդէն և անդ առնու արկանէ զլսողն 'ի մէջ յօդնախուռն անկուածոյ իրացն վիպելեաց իբրև 'ի յայտնի ինչ լսողին թէ ցայն վայր հանեալ իցեն իրքն ըստ յառաջագոյն անցիցն անցելոց. զոր ըսեալն է և զոր յետոյ առաջ յեռու վայել-

Ի խառն անդ հրաշն 'ի մէջ ոչինչ ընդհատ իւր 'ի յայսմիկ ։
Զոր չյուսայն յօրինուածով գեղեցկանալ թողու 'ի բաց ·
Եւ այնպէս խաբէ սուտ՝ պատիրս 'ի ստոյգն խառնելով,
Զի ոչ մէջն սկզբան՝ ոչ միջոյն վերջն ստար գտցի ։

Զոր ինչ ես և ժողովուրդն ընդ իս խնդրէ, աղէ դու լուր ։
Թէ ցանկաս ծափահարի վարագուրացն ակն ունելոյ
Բազմելով ակնդիտահոյլ մինչև երգիչ ծափ տուք ասէ,
Զհասակաց իւրաքանչիւր նկատելի է քեզ ըզբարս,
Զեղջեղուկ բնութեանց անձնիւր և տիոց տալ զիւր վայելուչ ։
Որ ըզձայնս հընչել գիտէ և հաստատուն հետս հարկանել
Ընդ իւրում հասակակից կայտառ մանուկ խաղալ խայտալ ·
Այլայլայր ցասմու լուծ և փոփոխի ժամէ 'ի ժամ ։
Անմօրուս պատանին՝ զերծ հուսկ ուրեմն 'ի դայեկէն՝
Ձիովք, առապականօք և յարեգծէր զուարճանայ դաշտ ·
Մոմ ըզմամ յախտըս կակուղ, առ խրատատուս ըղմնդըժնեայ,
Պիտանեաց պըղերգ 'ի փոյթ, դահեկանաց վատնիչ շռայլ,
Բարձրայօն, ցանկասէր և սիրելեացն շուտ անտեսող ։
Ի դառնալ յօժարութեանց՝ հասակ և միտքն այրական
Բարեկամս և զայս խնդրէ, պատուոյ պատկառ կայ և փառաց,
Զգուշ լինի չգործել ինչ՝ որ ստորջացի ապա փոխել ։
Տառապանք բազմապատիկ շուրջ տագնապեն ըզծերունին ·
Զի գանձեալն՝ ժուժկալէ հեռն 'ի մերձերից, վարել զընդայ,
Կամ զի ընաւին է իրաց երկչոտ և ցուրտ մատակարար,

չափակս 'ի պատշաճ տեղւոջ · զոր օրինակ Հոմերոս յՈդիսականին՝ Ոդիսեայ տալով պատմել զանցսն, և Վիրգիլիոս յԷնեականին Էնեայ ։ Եւ զոր մասն ստոյգ պատմութեանն չյուսայ թէ գեղեցկասցի արուեստիւ և հանճարով, 'ի բաց թողու զայն, և փոխանակ այնր զկեղծիսն այնպէս յօդէ ընդ ճշմարիտն, զի ամենայն մասամբք 'ի սկզբանէ ցվախճան համաձայն և պատշաճաւոր գացէ քերթածն ։

153 · Համայր քերթութեան արուեստի խրատ զիա, և ասացին՝ որ հասարակաց մտօք և բնութեամբ գտանի անտեղեակ ։

154 · Եթէ ցանկաս զի որ ծափս հարկանելոցն են 'ի նշան հաճութեան և զովութեան, նստեալ մնասցեն և ապասեցեն առ հեշտութեանն ամենայն փոփոխմանց վարագուրացն, մինչև 'ի վերջին փակուած սրահակի թատերին՝ որ զվախճան հանդիսիցն նշանակէր, և մի 'ի գուսանացն կամ պարն երգեցողաց ասէր առ ներ զայն ասելով ցհանդիսատեսն ԾԱՓՍ ՀԱՐԷՔ կամ ՈՂՋ ԼԵՐՈՒՔ ԵՒ ԾԱՓՍ ՀԱՐԷՔ ։ Եթէ ախորժելիք ունկնդրութեան քերթածիդ մնաս, խնամով ճշգրտեսջիր զնկարագիր բարուց իւրաքանչիւր հասակի · զորս և համառօտ պատմէ ճարտարութեամբ և մանր զննութեամբ յայն ինչ 'ի ընթացս և յառաջ եկեալ մանկանէն մինչև ցծերն ։

Յապաղկոտ, երկայնամիտ, յոյժ և անձկոտ հանդերձելոյն,
Դժուարահաճ, տրտունջօղ, գովիչ աւուրցն տղայութեան,
Պարսաւագէտ և դաժնիճ՝ պատուհասօղ մանկագունից.
Դիւր բազում բերեն տանին եկեալ անցեալ ամք ընդ իւրեանս.
Մի՛ գուցէ զարժան ծերոյն տաս պատանւոյ, զանդրն՝ մանկան.
Որ ինչ յանկ է որ պատշաճ տիոյն իցեն՝ յայն կացցուք միշտ:

Կամ գործին իրք 'ի թատերս և կամ եղեալք վիպասանին:
Թուլագոյն շարժեն զոգիս որ ընդ ականջօքն անցանեն
Քան որ զընկնին ինքնադէմ հաւատարիմ աչաց հանդէպ,
Եւ անձամբ հանդիսատեսն անձին իւրում աւանդէ զայն:
Սակայն մի զարժանն 'ի ներքս անդ գործելոյ՝ տար 'ի տեսիլ.
Եւ բարձեալ շատ ինչ յաչաց՝ պերճ ապա բան պատմեսցէ յայտ:
Մի զմանկունսն ածն յանդիման ժողովրդեան սպանցէ Մեդէ,

172. Սփէ լօնգուս. ինա որ երկայն յուսով սպասէ անհնարութեան իրում. յոյժ, գանդաղ, պղերգ և տաղտուկ. իսկ աւիդուս փուտուրի, գիտելոյ զինչ վաղիւն ծնանիցի, կամ՝ ցանկացօղ այլ ևս ապագայ կենաց:

175. Այլ եկեալք մինչև 'ի հասարակած կենացս՝ գալով գան և բերեն բազում բարիս և գիտութիւնս զարգանան և անձկացեալն հասակին. իսկ յետ այնորիկ անցեալ գնացեալ ամք՝ երթալով երթան և տանին ընդ իւրեանս զամենայն զոր ինքեանք բերին և զոր մարդս ջանիւ և աշխատութեամբ ստացաւ, և թողուն զծերութիւն արուց, զօս և տառապեալ: Մինչև 'ի կէս տիոցն՝ գալ և բերել ասին ամք. զի յաւելուած բարեաց առնի. իսկ անտի և անդր՝ գնալ անցանել և 'ի բաց տանել, զի կորուստ և նուազութիւն բարեաց լինի: Առաջնոցն բարեաց եկիր ասի, իսկ երկրորդացն ոչ նոյնպէս:

177. Որ ինչ յանկ և հարկաւ կից է ընդ բնութեան ամենայն հասակին, կամ որ թէ և չիցէ հարկաւ կապեալ ընդ հասարակաց բնութեան հասակին, սակայն պատշաճիցի նմա, յայնս կացցուք 'ի նոսին զեգերեսցուք:

178. Եթէ 'ի կրկին բաժանմանց գեղեցկին ընդհանուր բաժանումն բովանդակ քերթութեան իմասցուք, 'ի դէպ է և այն. զի ամենայն քերթութիւն կամ գործական է՝ արգեամբք գիրան 'ի տեսիլ ածեալ 'ի թատերս, կամ վիպասանական՝ բանիւ նեթ նկարագրեալ: Բայց յանձկագոյն մասն թուի խօսել աստ Որատեայ՝ զթատերական քերթածոց միայն, յորս է զի յայտ յանդիման ձևանան իրքն, և է զի յաղէբնոյթս ուրեք իրագործեալքն պատմին:

182. Թէպէտ և ազդողագոյն է տեսիլ աչաց քան զլուր ականջաց, ասէ, սակայն գոյ մի որ ինչ չէ արժան արտաքս 'ի հրապարակի թատերին ցուցանելոյ՝ հանել 'ի տեսարան ամբոխ, այլ թաքո յաչաց, և ապա վայելչապէս ուրեք յետ զպատմութիւն նորա 'ի բերանոյ ուրուք խօսելեացն առաջի հանդիսին: Որ ինչ ոչն է 'ի հրապարակ անդր թատերին կամ խաղէանեացն եղեալ՝ 'ի ներքս ինչ ուրեք լինել համարի: Պրոմէս բնագիրն ասէ ին սքէնամ, տեսարանաբար խմնման յայս յանդիման առաջի ժողովրդեանն. ոմանք խմնման ևս իբր որ անդ 'ի լինել իրացն՝ առաջիկայ ականատես լեալ իցէ անցիցն անցելոց: Բայց պատմելեացն ինքնին խմնի ականատես լեալ. թող զի և մարթի ևս ուրեք զհաւատարիմ լուեալսն պատմել: Իսկ թէ զորպիսի ինչ իրս անարժան դատիցի արտաքս երևեցուցանելոյ, յարէ զնին զաղետալիս և զանհաւատալիս:

184. ԶՄեդեայ տես 'ի 119. զԱտրէաս կամ Աշրէոս 'ի 92: Իսկ Պրոկնէ կին Տերեոսի 'ի խնդրել զվրէժ անարգանաց իւրոց և զզգածութեան քեռն իւրոյ Փիլոմելայ, մխարանեալ ընդ նոյն քեռն՝ սպան զորդի իւր և զՏերեոսի զԻտիս, և ջամբեաց

Յայտնապէս Ատրեւս ժըպիրհ մարդկան ընդերս եփեսցէ մի,
Կամ դարձցի Պրոկնէ 'ի հաւ կամ թէ Կադմոս 'ի վիշապ օձ.
Զոր այսպէսն ինչ ցուցանես՝ անհաւատեալ և ատեամ իսկ.

Եւ որ կամի ցանկալի լինել և գալ կրկին յատեան,
Մի քան զհինգ համդէս նուազ և մի երկար ինչ լիցի վէպ.
Մի դիք միջնորդեսցեն, բայց թէ կընճիռն արժան բազկի
Հասցէ՛նդ առաջ, և մի դէմք խօսել չորրորդ լիցին աշխատ.
Պարն ըսպաս գուսանի և այրական կալցէ պաշտօն,

'ի կերակուր առն իւրում. և 'ի փախչելն 'ի սրտմտութենէ նորա՝ ինքն փոխեցաւ 'ի ծիծառն, Փիլոմելա 'ի սոխակ. Տերեւս 'ի յոպոպ, խոյս 'ի փախչելն: Ըստ ոմանց առասպելաբանաց Պրոկնէ 'ի սոխակ, և Փիլոմելա 'ի ծիծառն. բայց ըստ առաջնումն օրինակին ունի և Ովիդիոս յԶ. Կերպարանութիւնսն, ուր հաւաստի քննութեամբ զառասպելդ դնէ և ոչ հարեւանցի յիշատակաւ: — Կադմոս որդի Ագենորայ սպանեալ զվիշապ մի նուիրական Արէսի, առաջ իւրոց ամենայն աւուրն 'ի բազում վիշտս տառապանաց մատնեալ լինէր, 'ի քաւութիւն վիշապասպանութեանն միայն աղաչեաց զդիս փոխել զինքն յօձ. և լսելի լինեալ՝ դարձաւ 'ի վիշապ: Այսպիսի զարմանազործ պատմելիք մարթին մատուցանել 'ի վիպասանութեան, բայց ոչ և արգասիք ձեռնալ 'ի թատերս:

189. Զի մի կարճութեամբ 'ի նուազ անկանիցի և կարի երկարութեամբն տաղտկալի լինիցի ունկնդրաց ողբերգութիւն կամ կատակերգութիւն, չափ ինն դնէ նոցա Որատիոս, մի երկարել և մի կարճել քան զհինգ համդէս կամ արարուած. որ են բաժանմունք և ընդհատութիւնք խաղոյն փակմամբ և բացմամբ վարագուրին, զոր և ամփոփելն վարագուրս կոչեմք: Այս բաժանումն հինգ թուոյն իբրև օրէնս պահեցաւ առ հինն. բայց յետոյն գարուց քերթողք ազատս արարին իբրև զոչ կարեւոր ինչ, և արդարանան: Զի ամբողջութիւն և բաժանումն հանգիսից 'ի ձայնութեան նիւթոյն հայի, և ոչ յայլ ինչ: Վասն որոյ և Որատեայ պատուէրն ոչ ըստ թուոյն առնելի է, այլ մանաւանդ ըստ քանակի նիւթոյն որ 'ի հնգամասն բաժանման անդ բովանդակէր առ իւրով ժամանակաւն: Զայս այսպէս արժան է իմանալ. և ոչ թէ զի անհնին ինչ և անօրէն ուսուցանիցէ Որատիոս զգասն:

190. Դիք 'ի թատերս կրկին օրինակաւ էին երեւել: Մին՝ իբրև զմի 'ի գուսանաց անուն խօսելով և գործելով խաղուն. զայս ոչ արգելու Որատիոս: Իսկ միւսն եւս 'ի մեքենայն և դիք՝ աստուածական զօրութեամբ յանկարծակի երեւեալ 'ի լուծանել զհանգոյց ինչ կամ զկնճիռն իրաց. յոր ընթացնեալ քերթողին և յանհնարս մտեալ բնութեան կարգաց լուծանելոյ՝ զդիս առնու 'ի թիկունս պայտառութեան հանճարոյ իւրոյ: Արդ մի յամենայն գուշակելոյս այսպիսի՝ զդիս կամ զաստուածեղէն գերագոյական կարգութիւնն առնուր, ասէ, միջնորդ, այլ գուն ունիք՝ ուր կնճիռն ինչ մեծ և արժանի մատին նոցա պատահիցէ:

191. Այս խորհելոյ 'ի խառնակութենէ և գերբարհաս առնելոյ դէմս և զերս խօսելոյն՝ ունելոյդ համարի խօսել 'ի թատերն չորից գուսանաց ընդ միմեանս 'ի միում տեսլեան. այլ երեք բաւական են յաւելոյ զրուցատրութեան: Իսկ թէ առանց չորից մարթիցի, չէ ինչ ընդդէմ: Բայց մարթի երեւել եւս բազմութեան 'ի դէմս դէմս առանց խօսակից լինելոյ ընդ երեան:

192. Պարն 'ի թատերս հնոցն խումբ մի էր գուսանաց յամենայն կարգէ մարդկան կամ գիր ըստ դէմս իրացն, որք նուագելով կային անդէն 'ի թատերն իբրև ականատեսք և վկայք իրացն. և երբեք երբեք խօսակից լինէին ընդ երից բուն խաղացողացն, բայց 'ի բերանոյ միոյն որ պարագլուխ կամ գոսապետն կոչէր: Իսկ գլխաւոր գործ նոցա էր նուագել տաղս ինչ յընթացքս արարուածոց հանգիստն: Արդ ազդս փոխանի և պատշաճ դերոյ՝ միոյ դիմի, միոյ խաղացողի գործ իմանի, միոյ առն լսէի: Այսինքն է, 'ի խօսելն մի խառն 'ի

Նա մի՛նչ մէջ հանգիստին արարուածոց երգեաց ևս
Որ ոչ կըշէր դէպ և դէպ հասուցէ յուշ նըպատակին.
՚Նա բարեաց Թիկունք լցի և սիրաբար խորհըրդական,
Համ դիցէ զայրացելոց և զմեղսատեացըն սիրեաց.
Գոռլեաց զաւդ սեղանոյ նա ինքն ըղձաւըս, նոյն զօրէնս,
Զարդարութիւն փըրկաւէտ և զըրանաբաց խաղաղութիւն.
՚Նա զխորհուրդըս պահեաց, զիւրն մաղթանս հանցէ ուղերս
Զի դարձցի առ հիւսցեալս և գնասցէ բախտ 'ի զաւաղաց.

Եւ երբ այժմ յարոյր կապեալ սըրինգ փողոյ նախանձաւոր
Դայլ նուրբ նըւագ պարզական երբեմն 'ի ծակ սակաւաթիւ՝
Միրմնջել և ժամորակ պարուն լինել էր օգտակար,
Ընչոյն ըզէն յոգնախումբ լցեալ ակումբ բազմականին,
Որ Թըւով աւալքէն սակաւաւոր յանժամ անձոխ
Նա ցածուն և պարկեշտ և պատկառոտ գայր ժողովէր.
Իսկ ըսկիզբն երբև արար զանդըս լայնել նա յաղթական,
Նա պարիսպ ընդարձակ շուրջ զքաղաքին բոլորել,
Նա 'ի տօնս անպատուհաս երեկոյեան զըւարթ գինեօք,

խուռն զնգովին խօսիցի. այլ 'ի գինւոյ միոյ առն՝ պարագլխոյն. և յերգելն ընդ մէջ հանգստիցն՝ մի ստարտաւ ինչ նուագեցէ որպէս առ կարի վաղեմեականն երբեմն. այլ զիւպաւորս իբրայն և զխոսաւորութեան հանգիստին, որպիսի Սոփոկլեայքն են: Նա երբև այլ բարի և խմստուն խրատս օգտակարս հիւսեաց 'ի տաղսն, բարեաց 'ի Թերէ կալցէ և խորհրդական, և այլն. զօրութք զանց արարեալ քերթողին 'ի կարգի խաղուն, զնէր առս 'ի բերան պարուն վեհմական ոճով քնարերգականաւ: Տես զու ինձ ատամոր զուգութեան և զբարուց խնամս առ նախնիսն:
198. Դանարաց առի խաղաղութիւն, զի սր 'ի ժամանակս պատերազմի կամ խռովութեան ամենայն գրունք փակին ընդդէմ հինի կամ Թշնամեաց, խաղաղութեան եկեալ բանայ, և ամենեքին յանհոգս և յապահովս կեան զրանք բացեալք:
199. Խրատեաց խորհրդապահ լինել զաղանեաց. և խնդրեաց 'ի գիզ, զի բարերատութիւն և յաջողուած դարձցի եկեսցէ առ տառապեալսն, և եղեալ գնասցէ 'ի բաց յամբարտաւանից 'ի բանաւորաց:
201. 'Ի հնագունից Թատերս սրինգն միակ էր, և պարզ՝ չև յերկուց 'ի մի զօդեալ արուրով, կամ 'ի յօդուածոցն աղօյս լանելեալ և կամ յայլ ինչ մասունս առ 'ի զարդ: Նա սակաւ ծակաւս մեղմ ասաիէր, և ոչ երբև 'ի նախանձընդդէմ եկեալ փողոյ՝ ուժգին և խրոխտ հնչէր. և բաւական էր 'ի լնուլ զինքն և զզատ ժողովարանն: Իսկ երբև մեծացան Թատերք և յաւելան ժողովուրդն, ընդ նմին և Թիւք և չափք երաժշտականք ստուարացան, երկու սրինգք արուրով զօդեցան, այլքին սակաւ ունելով ծակս և քաղցր ասաւ, իսկ ձայնոյն բազում ծակօք և զուեմն խրոխտահնչական: Զի և ոգեա չնաշակք ընդ ալշուականս խառնեցան խառնեցան 'ի լուր, որոց բերս լսելիք ուժգնագոյն ձայնից և եղանակաց կարօտանան 'ի շարժել:
208. Զարթի՛ն. բառ այլ որինակաց՝ ազատութիւն. խնդեալ ոչ զհաւանեալ եւեթ, այլ և զայլոց քաղաքաց հաւանեական ազատութեան, յորս և կայրն իսկ Թատերք:

Ընդ 'ի թիւս և 'ի չափս յանդգնութիւն մեծ եկն անկաւ ։
Զի տխմարն և 'ի յերկոց այն ինչ մտեալ զինչ գիտիցէ
Շինականն 'ի մէջ խառնեալ քաղաքացի , չարն ընդ բարին ։
Նոյնպէս շարժումն և զեղխանս ած սրնգահար 'ի հին արուեստ ,
Եւ զպատմուճանն 'ի թատերս ընդ քարշ էարկ յերթևեկի .
Նոյնպէս իսկ աճեցին' ձայնք 'ի քնարին լրջմտական ,
Եւ բարբառ օտար հրճուեալ լեզուն ձգեալ և սրրավար'
Պիտանեաց բան հանճարեղ և լինելոց նախագուշակ
Ոչ ընդհատ երևեցաւ 'ի դելփացւոց խոր պատգամաց ։

Որ ընդ անարգ նոխազին ողբերգական տաղիւ մարտեաւ ,

213. 'Ի հին 'ի պարզ արուեստն յաւել զշարժումն, զուշխոյժս նուագացն և զեւանդուն շարժուածս ձեռաց և զկայթս և զխաղս ոտից. և զզեղխութիւն, զշռայլութիւն ծախուց արծուին և յորդելոյն խըրախճանական ձայնից նորա, և զհանդերձանաց համարէն թատերն, և տատանմանն զպաճուճանաց զգեստուցն. ըստ որում և յարէ իսկ, թէ' և զպատմուճանն երկայն վերջաւորս քղանցաւորս 'ի քարշ տարաւ 'ի թատերն յերթևեկելն յաջ կոյս և յահեակ, որ որէնն իսկ էր պարուն 'ի կայն և 'ի նուագել յանկարգեաս հանդիսիցն ։

215. 'Ի նմին ժամանակի յորում այդ փոփոխումն լինէր 'ի սրնգն, յայնժամ և 'ի քնարին զգաստական' 'ի մեծարոյ և 'ի խոհական, որոյ նախուսա երկք միայն էին աղիք, յաւելան այլ ևս ձայնք' լարք ձայնատուք մինչև 'ի չորս և առաւ յեօթն ։ Եւ լեզու քնարերգական տաղասացից օտարացեալ 'ի նախնի պարզական վսեմախօսութենէն, սկսաւ օգտակար և սրավարս ճառատել' բարձրախօս լինել կարծելով. մինչև բանն հանճարեղաց, փիլիսոփական ողխանի և հանդերձելոցն կանխագուշակ խրատուց խաւարաժարարն լինելոյ. պատ 'ի պատ մանուածոյ ոճոյն նմանեցաւ խորհրդոյն և անիմանալի հրամանաց պատասխանւոյ և բղձութեանց դելփիական պատգամախօսին, որ 'ի Դելփիս յաղախնեան տաճարին յետասանւոյն բարբառէր գուշակական հարցուկն Պիւթիա ։

219. Ողբերգակ քերթողաց մրցմանց յաղթութեան և համբաւական լինելոյ գան զննելն էր նոխազ. իբրև նուիրական Սպանդարամետին' յորոյ 'ի տանն սկսան խաղք այսպիսիք. յորս և զոհէին նմա նոխազ. յայնմ և նոխազերգութիւն եա տաղցաւ ողբերգութիւնն ։ Այդ ողբերգակ քերթողքն տաղիւք, 'ի զուարճութիւն և 'ի զբօսանս ժողովրդեան, 'ի խաղս անդ կամ 'ի մէջոյս արարուածոյն ածին եւ 'ի ներարան զերբորդաբաս այծամարդոց կամ մարդայծից, որ էին հրեշք ինչ խառնակք 'ի մարդոյ և յայծէ կամ 'ի այծէ, նախագոյոնք. և մերկ երևէին բնիկ կերպարանօքն' խափեալ միայն ածեալ 'ի ծածկոյթ երեսացն ։ Եւ առանց ինչ ամօթխածութ ծանրութեան խառնեալ ողբերգութիւն կամ ողբերգական անձն խաղացող' խաղ առնէր ընդ նոսա և նոք ընդ սմա զաւեշտաբար և առու բանիւք, ծանուանդ 'ի կծանել զայս ով և զայն, և հեշտացուցանել ընթերցաւցանէր զժողովուրդն, որ առօրաբար յետ զօրից տեսական աւուրց զայլ խորերս 'ի թատրն կերակրել և արբել և յամենայն կապոյ երինդ արձակ ։ Այսպէս առեն ակեզն առեալ և երգիծարան քերթածոյ, որպէս և անունն իսկ յայտ առնէ 'ի յունին լեզու ։ Բայց պատուիրէ Որատիոս վայելչապէս առնել և զայս խեղկատակութիւն, և մի նուաստացուցանել զյառաջագոյն հանդիսացեալ մեծափառ դիցցազունն կրրու զշխարհաւանդիկս ոմանս. և մի զարծել վսեմախօսել կամ զօշ զհողմս և զամպս բռնանել, անուանել փըքոյք սանտալ կամ օգտարանս և սրավարս ճամարտակել ։ Այլ այնպէս խառնել 'ի խեղկատակութիւնն, որպէս մեծարոյ որ արկեն զի ստիպեալ երանէ 'ի խաղալ 'ի տօնս գեղջկաց. քանզի և ողբերգութեան անվայելուչ է թեթևութիւն զուարճութեան։ Արիստոփանեայ հեշտէն կատակերգակի խնուցեալ այլ մի յերկինց, և հարցեալ թէ զինչ տեսեր, տայ պատասխանել. թերթօղս ունէս սպանդարամետական ատտիկ.

Հոլանեաց ըզկնի ուրեմն և զայծամարդսն վայրենիս ,
Նա անվըթար ծանրութեամբըն խըստակրօնն էառ խաղալ ·
Զի յախորժ նորութիւն զսօսեցուցէ և 'ի հրապոյրս
Զհանդիսատեսն յետ զոհից ըզգինեզէն զապերասան :
Այլ օրէն ըզմարդապայման աղալեզուս և զծաղրածուսն
Ընծայել այնպէս իցէ , այնպէս ըզլուրջն 'ի խաղ շրջել ,
Զի որ աստուած որ 'ի մէջ և որ դիւցազն որ մատուցի
Յառաջն յոսկի պայծառ ու 'ի ծիրանիս արքունական ,
Յաշխարհաւանդս 'ի նըսեմ մի զառածցի նըւաստ բանիւ ,
Կամ յերկրէ 'ի բաց անցեալ՝ զհողմըս և զամպս ըմբռնեսցէ :
Թեթեւութեան վըժել տաղս ողբերգութեան լեալ անպատեհ ,
Իբր յաւուրըս տօնական հարկաւորեալ բամբիշն 'ի խաղ՝
Այնպէս դոյզն ինչ ամօթխած 'ի խեղկատակըսն խառնեսցի :
Զանպաճոյճ և զտիրական բընիկ անուանս և զբայս ևեթ
Զաւեշտաբար բանահիւս ոչ սիրեցից ես , Պիսոնեանք :
Յերանգոյն ողբերգական ոչ ճըգնեցից ցայն որոշել ,
Մինչ ոչինչ զընել խըտիր՝ Դաւոս իցէ որ խօսիցին ,
Թէ յանդուգըն Պիւթիաս կըթեալ քանքար 'ի Սիմոնէ ,
Թէ սանական դից Սիլէն դաստիարակ և սպասաւոր :
'Ի յայտնեաց տաղ բաղեղծից՝ զոր ամենայն ոք յուսասցի ,

որ ընդ հողմս և ընդ ամպս վարգէին՝ ժողովել մէգ և փոշի 'ի պէտս տաղիցն :

224 · Վարդապայ քաղ առացեալն 'ի գիրս ուրեք , վրիպակ Թուի գրչագրաց՝ փոխանակ մարդապայ գրելոյ , բառ որում խառնակ ինչ կենդանի 'ի մարդոյ և 'ի պայծ · վարդն ոչինչ Թուի նշանակել :

233 · Զբառս և զբայս ոչ պաճուճեալս պչրասցին յորջորջմամբ , այլ յատուկ և բնիկ ձայնիւք բառ հասարակաց ամենին սովորութեան , զամենայն ինչ իւրով անուամբն կոչելով , թէ զան հեղեղանք իցեն և թէ անհամեսութ , զայսպիսիս խօսեցից ես 'ի զուարճարաններս և 'ի խեղկատակել յողբերգութեան · կամ թէ բարեքեցից պարկեշտ և վայելուչ պչրասացութեամբ :

235 · Եւ ոչ ջանացայց այնչափ խոտորել յողբերգականն ոճոյն՝ պարզութեան ուղ կալեալ , մինչև չդնել ինչ բնաւ խտրոց ընդ խօսս խաղարկուացն , եթէ Դաւոս առըստ իցէ որ խօսիցին , կամ Պիթիաս աղախին՝ որ Ճարտար խորամանկութեամբ հանէ 'ի Սիմոնէ ծերոյ տաղանդ մի արծաթոյ 'ի կատակերգութեան Լուկիլեայ լատին քերթողի , զոր 'ի կեթել այլարանէ և բնագիրն Որատեայ , եթէ Սիլենոս աշխուական զայեակ և սպասեակ Բաքոսի Սպանդարամետ դից՝ իւրումն սանու : Յայնպիսի ծաղրածու խաղս այծամարդոյ զասապետ պարու կայր միջակերպարանեալ ոմն Սիլենոս :

239 · 'Ի ծանօթ և 'ի սովորական իրաց առից նիւթ կեղծեաց այսպիսեաց տաղից , և 'ի հասարակաց բնական խօսից ընկերպաբանս ոճոյն , որ այնպիսի դիւրին և հեշտին երեւեսցի · մինչև կարծել ամենայն ումեք՝ թէ և ինքն կարող իցէ առնել զնոյն նմին վայելչութեամբ · և սակայն ստուգի 'ի ջերան հարեալ և 'ի զուր աշխատեսցի : Եւ այսմ պատճառք այն են , զի մեծ և զարմանալի զօրութիւն բնակէ 'ի շարս և 'ի յօդաւորութիւնս բանից , և մարթի յաւելուլ վայելչութիւն մեծ յեղս հասարակաց , եթէ միայն զործել գիտիցէ Ճարտարն · և նմին իրի ոչ ամենեցուն է դիւ֊

Այլ սակայն ձեռն արկեալ տաժանեսցի զրաջան քըրտամբք.
Որչափ է զօրութիւն կարգի բանից և հիւսուածոյ,
Որչափ յերս հասարակաց յաւելլուն շնորհք վայելչութեան.
'Ի մայրեաց ելեալ պայք ըզգուշ կացցեն յիմ դատակնիք,
Զի մի գեղջկաց ինչ հանգոյն և գոգ մանկանց հրապարակի
Կամ կարի գողտրիկ տաղիւք լըկնեալ երբեք խենեշասցին,
Կամ զաղտըլս ժայթքեսցեն և լուտանաց խօսք խայտառակ.
Զի ոյց հայր և ստացուած և երիվար է՝ զայրանան,
Ոչ յոր ինչ ախտան մըրկի կամ ընկուզին հաճի գնող՝
Ընդունին մտադիւր և ոչ պըսակըս տան պարգև.

Վանկ երկար 'ի սուղն յարեալ՝ անուն կոչի իւր մեծավերջ.
Սոն երագ, վասն որոյ և եռաչափ յորջորջմանց
Այս հրաման մեծավերջեանց՝ թէպէտ վեցեակ հանէր զոտին.
Յառաջնոյն մինչ 'ի վերջին նոյն և նման առհասարակ.

բազիւս։ Զայս գեղ ասելով զմարգասպայեալն խաղուց առնէ Որատիոս. բայց Դիւցեմորտեալ է և յայլ ամենայն ազգս քերթոծաց։

243. Զպայս զհրապարակուան առնելով զքերթողն այնց խաղուց կամի առել։ Նրդ առէ. ընդ խնամ զատաստանի, քանզի 'ի բնէ անտառաբնակ պայքն 'ի թատերն անգամ 'ի մայրեաց ելեալ գան 'ի գուշս 'ի հրապարակ անդր, չպարտին երբեք զգեցուցանել անձանց հանճարաբանել, սակայն և զգուշ լիցին յերեւել գեղջկիկս ինչ, և մի լկնենալ հայհոյս և մերկ բանիւք տաղուականաց, կամ զազրաբանել թշնամանալից բարբառով։ Զի ընդ այնպիսիս զայրին բարեծնունդքն և բարեկեցիկք, որ գոյաւորքն են, և ունողք ձիոյ կամ ասպետք, և ստացուհք կամ պատրիկք՝ որք ունին հայր 'ի ծերակուտին, որոց ասպատնին հայրքն կոչէին. և չհաճին ընդ որ ըմբռանոսաց պակասի առանձին որ 'ի հրապարակս գնէ և ուտէ սիսեռն կամ նուշ մըրկեալ։

250. Զոտքն տարգեալ ցայս վայր, այժմ առէ զպատիւս ուրեքն թատերական քերթածոց Յամբոս և Հասամեց, այլ մեծագանայն միտս տայ և այլոց ըմբռնեայ խրատու խնամուութեան յերբարանչիւր չափս տաղից։ Տես և 80։ Երկարանանկ ոտն՝ յորում առաջին վանկն է սուղ և երկրորդն երկար, մեծավերջ կոչի. և երկաչափ առն տաղն՝ յորում չորք մեծավերջ կան, եռաչափ՝ յորում վեց։ Իւ զի երագ ոտն է, վասն սուղ վանկին յերկարն թաւալելոյ սահեալ անհանելոյ, և վասն նիսոյ չափ յաճախութեան ոգիցն և խոսա խոսա յորջորգելոյ, նմին իւր թէ և վեցեակ բախումն առնիցի վեցիւք ոտիւք. սակայն եռաչափ կոչի մեծավերջեան, զերկու ոտն 'ի մի չափ առնուլ։ Այս է, թէ և վեց ոտն ունիցի, չափն համարի երեք. որ 'ի դիւցազնական վեցոտանին հաշուին չափք երկոտասան։ Զոր քերթողքն սուտաւորեցին կամ օրինադրեցին, զնոյն մեծավերջ ոտին ընծայէ զիմաստնարար. որպէս և զնի՝ զոր քերթողքն ընկալան կամ մերժեցին կամ առօգաւին, զամենայն 'ի գեղմքս մեծավերջ ոտինն առնու։

253. 'Ի սկզբան անդ մեծավերջական տաղն յամենայն ոտս իւր ծայրէ 'ի ծայր անխառն մեծավերջիւք յօդէր. այլ որպէս զի փոքր մի ծանրագոյն լիցի, առաւելեալ 'ի յետին ժամանակս ընկալաւ 'ի սեփական կայանս իւր զծանր և զգանգաղ հանգոյց ոտն երկայնանիկ, որոյ երկոքին վանկքն են երկար են։ Բայց այժմ ներողամիտ եղև մինչև յառաջին և յերրորդ անդրոյդ անտի. իսկ 'ի զուգայն՝ յերկրորդն և 'ի չորրորդն ոչ եա անդի մեծավերջն, այլ անխառնուս կայաւ զայնպիսի

Այլ զի խուն մի յամրաքայլ և ծանրագոյն ազդեցի յանգս ,
Ի սահմանեալն հայրենի զկայուն համբոյրս առ 'ի մօտոյ ,
Ներող ասպընջական , սակայն և ոչ յերկրորդ գահէն
Կամ տայր նա տեղի երբէք 'ի չորրորդէն ընկերաբար ։
Որ յակնեան սակաւ լոյսի պերճ եռաչափս , և 'ի յետնեանս
Մեծարեալն ծանրութեամբն 'ի տեսարան արձակեալ տաղս՝
Ըզգործոյն շունթափելոյ 'ի զգուշաւոր խնամոց մերած
Կամ զարուեստին խամութեան բերէ կորանս անճշմարտ ։
  Ոչ ամենայն դատաւոր խըրպոտ տաղից լինի հասու ,
Եւ հռոմ քերթողաց շնորհեալ ներումն է տարադէպ ։
Իսկ արդ յայդ ինչ ապաստան մարտիցիմ ըստ քմաց 'ի գիր ,
Կամ թէ զմեզս ակնյայտնի համարեցայց ամենեցուն՝
Յուսով թողութեան աներկեան և յապահով .
Ի ստգիւտից ազատ զգոյշ , իսկ գովութեան ոչ արժանի ։
Դուք զհելլէն տիպարս 'ի ձեռս ամէնք ըզտիւ ամէնք զգիշեր ։
Սակայն ձեր գովեցին հարք ըզպղաւտեան չափս և ըզկատակս ,
Յաւէտ ինձ ընդ երկոսին ներողաբար ըսքանչացեալք ,
Չասեմ յիմարաբար , թէ միայն ես և եթէ դուք
Ըզգեղջուկն և զուարձախօս գիտեմք ընտրել բան 'ի միմեանց ,
Եւ եւս մատամբք և ունկամբ օրինաւոր ձայնից հըմուտ ։

յերկաչափ տաղս ։ Զնոյն խմա գրեթէ և զզուգից եռաչափին , զորս հարկիւ երբեք ներբէ այլում ամին ։ Եւ այս մեծամեծք , աւաղ , կարեւոր և անխախտ 'ի զոյգ տեղւոջն ըստ այժմու ձեղագոյն օրինաց , ոչ պահին յեռաչափեան Ակկիոսի քերթողի . և նոյն մեծամեծք կարևոր՝ պակասեալ 'ի տաղսն Էննիոսի , որ ծանր հանդուրժելի առաքեաց էն 'ի տեսարան անդր , սակս ածէ քերթողին տաղնապափոյթ արագելոյ անհոգութեամբ 'ի վճար գործոյն , կամ յարուեստին խակ լինելոյ ։

262 . Ոչ ամենայն ունին քաջ խելամտաւ լինել անյարմարութեան չափոց տաղից և զաշանց տաղից ։ Եւ յայսմ մասին , աւաղ , անարժան ներողութիւն շնորհեալ է հռովմայեցի քերթողաց ըստ քմաց վարելոյ ։ Զայս սոպաեալ , արդ հարցանէ՝ թէ յայս ներողութիւն յուսացեալ ըստ կամս անձին զինքնիշխանութեան վարիցիմ 'ի գրելն ինչ , կամ թէ և ամենեցուն յայտնի համարիցիմ զախալանս՝ անհոգ և անկասկած զօլով յուսով թողութեան անփոյթ արարից ։ Եթէ զոյգ առնիցեմ , 'ի մեղադրութենէ միայն զերծ գտանիցիմ կամ առ ներողամտութեան այլոց կամ առ ազխոտութեանն , այլ ոչ եթէ գովեստի արժանաւոր եղէց յանդուգն և 'ի բանիքումն կարգմեաց ։ Այդս օրինակ տայ ընտրելական տաղից զհելլէն քերթողացն այնպիսի գովութեամբ , որ չգիտեմ զինչ չարժիցէ յայնպիսի բերանոյ . և սաստկիւ բամբասէ զՊղաւտոս յարուեստին կատակերգական, և զհինան՝ որ ընդ նա յոյժ էին սքանչացեալ ։ Կատակքն , ասէ , գեղջկականք են , և չափք տաղիցն ոչ գեղեցկագոյնք , իսկ ունելով յանձին ոչ միայն զհամբերողս՝ այլ և զգովեսն , եթէ ունին մեր նոքա ընտրող և օրինաց տաղից , և մատամբք մեր ձայնարկ 'ի չափել և թուել զտաս բարեյարմարս տաղից ։

Զանծանօթ զողբերգական նուագաց ազգ հնարաւորեալ
Եւ սայլիւք շուրջ ըզքերթածս 'ի ձեռն ածեալ ասի Թեսպիս,
Զոր մրրով զերեսս օծեալք նուագէին և խաղային։
Այեղուչ պարեգօտի և գխնակին գտող Եսքիլ
Յետ նորա չափաւոր մածոյց ըզբեմըն գերանօք,
Եւ վեհեմն ուսոյց խօսել և հաստատել զոտս 'ի կօշիկ։
Զհետ սոցա հին կատակերգք յաջորդեցին մեծ գովութեամբ.
Բայց յեղեան ազատութիւնքն զառածաւ և 'ի վտանգ
Օրինաց սաստից կարօտ, և լռեալ օրէնքն ընդունելի՛

274. Առաջին սկիզբն Թատերականին խաղուց այսպէս աւանդի եղեալ։ Առ կարի հնագոյնսն հեթանոսաց 'ի սպանդարամետական տօնսն նուագէին զԲաքոս կամ Դիոնիսոս, և զոհէին նմա նոխազ, յորմէ այն երգք նոխազերգութիւն անուանին։ Եւ ոչ միայն 'ի տաճարս և 'ի քաղաքս ածէին զայդ. այլ և 'ի սայլս կամ 'ի հնծանս այգեկթաց եղեալ, և մրրով կամ ըստ Տիբուլլոսի քերթողին (Եղեր. գիրք Բ. տ. 55) նօթիւ զերեսս օծեալ առ 'ի կերպարանափոխ լինելոյ, այնպէս շուրջ յածեալ երգէին և խաղային և [illegible] ձևացուցանէին զսպանդարամետական վէպսն և զառասպելս, երգեին և զայլոց դիւցազանցն։ Այսմ նախագաղ առն Որասիոս զԹեսպիս անթենացի. զոր պարոս է խմնեալ ըզսայլիցն և զմրրոյն, և զի զանն 'ի գուսանացն կարգեաց միայնել կամ խաղալ զսպանդարամետական վէպսն և զայլոց ևս դիւցազանց. զի միայն սպանդարամետական երգքն և ըռնազոյն են քան զԹեսպիս ժամանակաւ։

277. Զհետ Թեսպեայ Եսքիլոս հանճարեաց փոխանակ մրրոյն զդիմակ, և զերկայն աշխղեալ պարեգօտ և զկօշիկ կամ զմոյկ ոտից 'ի վայելչութիւն և 'ի բարձրահասակ երևել։ Եւ փոխանակ սայլին կառոյց բեմ բարձր՝ խոստորան խաղալեացն, և փոխանակ միոյն երկուս կացուցեալ գուսանս 'ի խօսակցութիւն, ուսոյց վեհեմ բարձրաբանել, 'ի բաց ընկեցեալ ըզխեղկատակութիւն։ Զկնի Եսքիլեայ ծաղկեցին երկոքին մեծ ողբերգակքն հելլենացոց՝ Սոփոկլէս և Եւրիպիդէս. որոց առաջինն մանաւանդ 'ի ծայր կատարման հասեալ է, մինչև Արիստոտէլի կոչել զնա ատաղձնաւորին՝ [illegible] և զԳինիդ գարոս։ Խնդիր եղև և առաջին որ երբեք գեղմես 'ի զուգաշարել էհան, աՀնդայ և [illegible] պարուն։ Իսկ 'ի Հռոմայս չէք ով առ մեզ հասեալ մեծանուն ողբերգակ կատարելի արժանի։

280. 'Ի զարգանալ ողբերգութեան եկն եւ 'ի վեր երևեցաւ և կատակերգութիւնն առանձինն, որ յառաջին խառն էր ընդ նմա, որպէս ասացաք 'ի 219։ Եւ հին ասի նորագիւան այն, յորում յականէ յանուանէ խայտ առնէին զարս նշանաւորս և հռչակաւորս 'ի ժամանակս ընկերահասակութեանց աթենացոց։ Եւ երբև այս յանդգնութիւն 'ի յոռութիւն և 'ի չնաշխարհ յոյժ էր կրթեալ, եկն տիրեաց Աղեքսանդր քաղաքին աթենացոց. և ժողովրդեանն նուաճեալ ընդ սաստիւ Թագաւորական իշխանութեան, գադարեցին փոքր մի 'ի չար սովորութենէն։ Եւ խեղկատակ լռեալ այնուհետև ազնուագոյն [illegible], արժան զառանցան օրինօք եւս արգելուլ 'ի սոյն՝ չաղանել զուրուք 'ի կենդանեաց զանուն 'ի բեմսն. որ և եղև իսկ Հրովմայեցւոց Լատմերոյ։ Եւ այսպէս 'ի բառնալ այնպիսեան համարձակութեանն, պարըն գուսանաց և խաղացողաց՝ որում էր ասել երգս [illegible], կոչեցաւ դադարեալ [illegible] և յանկարծ լռեալ ըսեաց այնուհետև [illegible]։ Այս յայնմ հետէ սկիզբն առ միջին կատակերգութիւն, յորում առանց անուան յայտնի ածէին և խաղ զդէմսն։ Այս և այսմ խափանեալ, եկն և նոր կատակերգութիւն 'ի կատարեալ չափ խոհականութեան՝ յորում և է իսկ ցայսօր։ Հնոյ կատակերգութեան օրինակ գրեթէ քաջ կայ և այսօր Արիստոփանեայ յոյն. միջնոյն և ոչ մի. իսկ նորոյն՝ քաջանուն էր 'ի Յունաց Մենանդրոս, այլ չեք այժմ 'ի միջի, և կայ նախանձայոյզ հետևող և երկիցս նմանող նորա կամ Թարգմանիչ Տերենտիոս Հռովմայեցի՝ ընտիր և քաղցրաբան։

Վարկեցաւ պարն ամօթով, բարձաւ մտաւոյն իշխանութեան։
Ել թողին ինչ անփոյթ և մերկանք բանեղծարանք.
Եւ ոչ փոքր ոսկին պարծանս հարկանելով ձեռըն յանձին
Ընդանել զՏէրզիլեն շաւիղս և զառոյնն իւր հրաշակել,
Եւ զլօգկեանս որ ուսուցին և որ գամ մի զպատմուճանեալս։
Ել պերճ զննուք ուսումեանք վեհ քան լեզուաւ գոյր Լատին,
Սև գեղեր և խարտոցի ձիգըն սաստն չէր քերթողաց։
Ով արուն պոմպիլեան, լերուք տաղից դուք պարաւէց
Զոր ոչ ասաւը յոլովք և ոչ քերթուածն ընկձեաց երկար,
Եւ ոչ տանիցս եղերգամբք յղկեալ կոկեաց յանգոկ գործոյն։

Զի զհանճարքան զհէք արուեստ գեղեցկանիկ յայտ վարկուցեալ
Եւ զգգասա հանէ քերթողս յՀելիկոնէ Դիոնեկրիտոս,

284. Եւ հռովմայեցի բանաստեղծք զամենայնի փորձ փորձեցին և նոքա։ Բայց նախ թարգմանել սկսան զյունականսն. և ապա առ սակաւ սակաւ համարձակեցան թողուլ զհետս նոցա, և յանձանց յօրինել թատերգութիւնս զազգային իրաց։ Եթէ ընդ հռովմէական վէպն ողբերգական և կատակերգական յաւագորերոյն և յազնուականաց առեալ էր, կոչէր լօգկեան, զի լօգիկս զգենուին նոքա, ժողովրդեան ծիրանաւ. իսկ թէ 'ի ստորանաց էր նիւթ թատերգութեանն, կոչէր պատմուճանեալ, զի հանդերձ էր նոցա պարզ և անպաճոյճ պատմուճանն։ Իսկ 'ի հելլենացի վիպաց առեալ խաղք՝ կոչէին պարեգօտեալք։ Եւ ուսուցանել ասին թատերական քերթողք զի ինքեանք ուսուցանէին և կրթէին զդասասան և բոլոր թատերին առաջնորդք կային։

289. Դեգեր է երկայն պարապումն մտադիւրութեամբ արուեստին, և խարտոց՝ քերումն և քերթումն և յղկումն տաղիցն մինչև քաջ ողորկեսցին։ Զայդ աշխատ պակաս գտանէ 'ի յատուն թատերգողն։

290. Արուն կամ ազգ և սերունդ պոմպիլեան կոչէ զնոյն ինքն Պիսոնեանս առ որս խօսի. զի զարմ նոցա 'ի Նումայ Պոմպիլիոսէ սերեալ խաղացեալ գոյր 'ի յաջորդէն Հռոմուլոսի կամ Որոմիլոսի նախահօրն հռովմայեցի անուամբ և կառուցողի Հռոմ քաղաքի։

292. Եղերգամբք յղկելն օրինակ առեալ է 'ի ճարտարաց արձանաց կամ փայտի, որ ծայրիւք մատանցն և հարթեալ եղնգամբ զննեն զորակութիւն գործոյն. և թէ խոշորութիւն և անհարթութիւն ինչ կամ գեղութիւն ուրեք գտանիցեն, յղկեն և կոկեն։ Այսպէս 'ի կատարել իսկ գործոյն հանճարոյ ամենայն մտաւորք՝ տակաւին մանր քննեսցի և ողորկեսցի է մինչև ցինն ամ, որպէս զինքն ասէ 'ի 387։ Բայց հանդերձ այսու չէ պարտ մոռանալ և զխրատն՝ զոր վերագոյն ասացեաք, թէ՝ որ կարի իմն նրբութեան և զորութեան տաղիցն ջան տանի, ջլատէ և կթոտէ զնոսա (27)։

294. Դիոնեկրիտեայ Փիլիսոփայի ասացեալ էր ուրեք, թէ առանց մեծի հանճարոյ և մոլութեան չմարթի արուեստիւ բնաւ քերթող քաջ եղանել, իմանալով զգեղեցիկ մոլութիւն և շնորհաբաշխ հիացումն մտացն՝ որով աստուածաբերեալ և ընդունումն իմն կրեալ իբր 'ի վերուստ և այլայլեալ լինել, վասնորոյ զզարմանալիսն բանից և զազդեցականս։ Վկայէ նմին և Պղատոն և Արիստոտէլ։ Այս է տարագիր հանելըն յՀելիկոնէ կամ 'ի Հելիկոնէ, որ էր լեառն Բիովտիոյ բնակարան Մուսայից։ Ծաղր հարկեցեալ, ասէ, ամենայն անմտաց և յայս անձանց քերթողաց՝ զխուխու և անյարդար և վայրենի շրջին իբրև զմոլիս. զի համարին այնու արտաքին կերպարանօք քերթող երևել, եթէ օրինակ իմն զզլուխս իւրեանց չատեցեն ասփրել Անտիկիրեայ վարսավիրայի. զգլուխս՝ որոց ոչ եթէ միով, այլ և երիւք Անտիկիրեաւք չէմարթի բժշկել։ Եւ է Անտիկիրա կղզի մի յեգէական ծովուն, ուր առատ բուսանի

Եւ զեղընգունս սրբել՝ ոչ ընձեռու հոգան բաղանիք ,
Ի զանխուլ վայրս ընթանան, 'ի բաղանեաց առնուն հրաժեշտ ։
Զի զանուն ժառանգեսցեն ըզքերթողի և ըզպատիւ ,
Թէ զգլուխ Անտիկիւրօք անբուժելի խելապատակս
Եւ երբեք հաւատասցեն 'ի Լիկինոս վարսավիրայ ։
Ո՛վ պանդոյր ես որ առ դուրըս գարնայնոյն ըզմաղձ թափեմ ·
Եւ ոչ այլ ուրեք քան զիս ընտիր քերթուածըս յօրինէր ։
Բայց չէ ինչ, արդ ես ըսպաս հարից ուրեմն ըզյեսանի
Որ զերկաթ գիտէ սրբել՝ ինքըն նուազ հատանելոյ ։
Ըզպաշտօն և ըզգործ, իմ ոչ գրելով ինչ, ուսուցից ·
Ուստի գանձք մըթերեսցին, զինչ քերթողին սընունդ և կեանք ,
Զի դէպ, զի ոչ, քաջութիւն մոլորութիւն յո տարցին յով ։

Ըսկիզբըն ուղիղ քերթութեան է և աղբիւր իմաստութիւն ·
Սոկրատեան մատեանքըն իցեն քեզ բաւական նիւթ ընծայել ,
Եւ իրին հետեւելոյ՝ բառքըն ինքնակամ գայցեն ըզհետ ։
Որ ուսաւ զինչ հայրենեաց՝ բարեկամաց զինչ իցէ պարտ ,
Որ սիրով ծընօղն իցէ՝ որով եղբայր, հիւր սիրելի ,
Զինչ ատենակալ, զինչ դատաւորն ունիցին գործ ,
Զինչ պայմանք զօրավարին առաքելոյ 'ի պատերազմ ,
Նա գիտէ իւրաքանչիւր ումեք զարժանըն տալ անշուշտ ։

վրացի կոչին մաղձադեղ և գարշանիչ խելաց ։ Իսկ Լիկինոս էր անուանի վարսավիրայ ումն 'ի Հռոմ քաղաքի ։

300 · Եթէ այդ այդպէս իցէ և բաւ նոցա կարծեացն պարտ իցէ գալ. վայ ինձ, զիս զանխիտ, ասէ Որատիոս, որ յամենայն մտաւ գարնայնոյն մաղձադեղ առեալ սրբիմ ։ Զի եթէ մաղձ զառածութեան, յորմէ և խելաց իսկ առնի խանգար, կարեւոր կամ պիտանի ինչ էր 'ի քերթութիւն, ոչ ոք անցուցանէր զինև քերթութեամբ ։ Զի մաղձաւոր իսկ ասանգի լեալ Որատիոս ։ Այլ չէ ինչ, ասէ. այս է, չէ ինչ մեծ եթէ կարասանեմ զանուն մեծի քերթողի, և ստանամ զմասանց ։ Այլ ասա ուրեմն, քանզի ես չեմ մեծ բանաստեղծ, գործ յեսանի միայն կատարեցից՝ զայլս սրել. ուսուցից զպաշտօն և զգործ քերթողին, թէինչ ունելով իմ գրեալ ։ Այլ յինէն զի Որատեայ չէք ինչ ընդ գրեալ գիտացեական տաղ կամ ողբերգական և կատակերգական որ բուն գլխաւոր հանդէպք են քերթութեան ։ Բայց զայդ և առ չափաւորութեան և պարկեշտութեան խօս. զի ոչ եթէ չիցեն քերթութիւն և քնարերգութիւնն և հովուական քերթուածն, յորս իշխան է ամենայն չատին քերթողաց Որատիոս ։

308 · Սոկրատեայ իմաստասիրի անուամբն խօս զամենայն իմաստասիրաց մատեանն ։ Զի որովհետև ասաց իսկ, թէ իմաստութիւնն է սկիզբըն և աղբիւր ամենայն ուղիղ քերթութեան, բաւ կարգի ապա առաքել 'ի գիրս իմաստասիրաց, անտի ընդպատաւել զմտան ազգի ազգի հիւթովք, որոց ինչպիսին զհետ գայցեն բանքըն և բառքըն 'ի խօսել՝ 'ի պաճուճել և 'ի կենդանացուցանել զքերթողաբար, և ոչ թէ փիլիսոփայորէն անզարդս և դժու Ջաղացադարանաւ նէթ ։

Հըմուտ նըմանողին ըղձալս և զպարըս տաց պատուէր
Սըրկըլաւէլ, և անդուստ 'ի դուրս բերել ճըշգրիտ բառըս .
Ի՝ զի սոտ անդ զօշատիչ վէպ և բարուց նըմանահան ,
Աէ շընորհ ինչ ունելով՝ ոչ մըտ կըրշալ և ոչ արուեստ ,
Քաղցը 'ի քիմս է մեծապէս ժողովըրդեան և զբօսուցիկ ,
Քան թէ տաղք անհիւթաւորք և նուազաւոր մտաւեաց հընչմանք :
Օ հանճար Յունաց եւ Մուսա՝ Յունաց որոյ լեզուաւ խօսել ,
Այն որ ոչ յայլ ինչ բըռնաւ քան 'ի գովեստ ելն ագահ :
Մանկտին հռովմէական կըրթի յուսումն երկայն հաշուի
Ըզդըրամն 'ի մասունըս կտորել հարիւրաւոր :

315 . Նմանող առի ամենայն բանաստեղծ, որ զկերպարանս բնութեան և զհանգամանս նկարագրել պարտի՝ նմանող նմին լինելով յամենայնի ըստ ընտրական գեղեցիկ ճշգրտութեան : Արդ այսպիսում պարտուէր տայ՝ քաջ նկատող գիտող և զննող լինել ամենայն ազգի ազգի բարուց և վարուց , և ըստ այնմ կենդանագրել զնոսա ճշգրիտ կամ կենդանի ձայնիւք , որպէս թէ արգեանք և կենդանեաւ 'ի միջի կայցեն նոքա կամ խօսիցին , զորոց զկերպարանսն առնու :

317 . 'Ի ցուցանել թէ քանի մեծ է զօրութիւն կենդանի նկարագրութեան բարուց՝ օրինակ տայ , զի երբեմն միպասանութիւն ինչ՝ թէ և ոչ այլ ինչ շնորհ ունիցի , ոչ ծանրութիւն ինչ խմաստից և ոչ արուեստ , այլ միայն 'ի անգիտ 'ի անգիտ պայծառ և երևելի իցէ , բայց ճշգրտագործ բարացուցական նկարագիր , այն յաճախակէ զժողովուրդն , զազգն , քան թէ տատանաւորք անխմաստք կամ անիրք , և լոկ անուանք քաղցրահնչականք : Փոխանակ տոփ տոփ կամ տոյէփ տոյէփ անուղղայն՝ կէս օրինակք ընթեռնուն խաղաղ կամ կատակաց և զուարճութեանց . միով առաւել զանազանեալ 'ի լատինն locis և jocis :

321 . Մուսա , որպէս յայտ է , էր աստուածուհի գրչութեանց , գիտութեանց , երաժշտութեան և ամենայն ազգի ազգի հանճարոյ , և աստանօրինն բանաստեղծութեան : Ինն քորք էին զատեալք Արամազդայ , միով հասարակաց անուամբ Մուսայ կոչեցեալք : Սորին լեզուն է Յունարաբնակեալ յօգեալ և կոկ բառըսա , որ զմարդարուն կատարումն և զազգայնութիւն յայտ առնէ : Իսկ ագահ՝ եթէ զանձնագոյն զօվութեան և եթէ զճշգրտոյն նշանակէ : Զի էին իսկ Յոյնք սաստիկ փառասէրք և ցանկացօղք գովեստի , և միանգամայն ագահք և ժլատք 'ի գովել վարկպարազի զայլս . որով և ինքեանք 'ի փոյթ լաւութեան և քաղաքութեան ազնուին զանձինս , և զպարծանս ներքոյի տայինն միայն արժանաւորաց . և երկրպագումն այգու 'ի կատարումն ամենայնի իրախոսակին : Այս ևս հաշակ գրուատեկի յունական հանճարոյն և ողորկութեան տաղից յՈրատեան գրչէն՝ զինչ պարծանք չիցեն հեղ լեն քերթութեանց , որոց բաղդումն՝ առաւելն՝ չեն այժմ 'ի միջի : Զայս Որատիոս յիւրում ժամանակին առ Իտալի . բայց մեզ ընդ հեղ լինելոցին վայելէ զատել և զամենայն 'ի հաւուածայկեցուց , ըզՏերենտ , զՊլաւտի , զՎիրգիլ . զնոյն ինքն զՈրատ և զՏիբուլ , որ ոչինչ ընդհատ են 'ի նոցանէ հանճարով և ողորկութեամբ տաղից ըստ տանելոյ լատին լեզուի :

324 . Դրամն է վեց դանգ , դանգն երկոտասան գարի . չորրորդ մի դանգին կամ երեք գարին առի եւ թասու . և վեց դարին է կէս դանգ , որպէս ինքնին իսկ յայտ է : Արդ առ Յունաց ճարտարութեամբն զհաւաքմայեցուցն եղեալ հնդնորկէն , առ քա՝ առն 'ի հաշիւս ընդդէմ և մեծութեան պարապոյն , և քանզի իսկ են . փորձով յուցից . աւասիկ որդին Ալբինոսի վաշխառուի կամ փոխատուի . ատեսկ զնորդ ճարտար է 'ի գիտութեան : 'Ի հինգ գարեաց հանեալ զերկուսն՝ զինչ մնայ , ասէ սա : Եւ իբրև թէ մանուկն առացեալ իցէ ասել կարէն երեք , կամ թէ ըստ օրէնս ուսուցի մանկտւոյ՝ Որատիոս թեղադիր լինի զձայն արուեստին քաղաքերկով միանգամայն մարգասիրութեամբ , թէ կարէիր ասել թասու : Եւ արդ ընդ հենգն կամ 'ի գիտնաց ըսկեղեայն ձայն արձակէ զովութեան , թէ հզօր ես դու և կարող 'ի պահպանել և յաճեցուցանել զստացուածս :

Ի հընգից եթէ գարեաց բարձցին երկուքըն՝ զինչ մնայ ·
Գոզցէ որդին Ալբենի · — կարող էիր ասել՝ թասու ·
Ուա՜չ քաջիդ, դու զօրաւոր լիցիս պահել ըզինծութիւնդ ·
Այլ անդրէն դառնայ գայ մի գարին, արդ զինչ լինի · — կէս դանգ ·
Ուր միանգամ ժանգ և հոգ ըստացուածոց յայս 'ի տոգորս
Զոգիսն արբուցէն, իցէ՞ տաղից յոյս քերթմանց
Որ ծմամբ եղենիւ կճպեալ պահեստ փայլուն նոճիայ ·

Կամ օգտել կամին քերթողք կամ հեշտութիւն մատուցանել,
Կամ զօգուտ խօսել կենաց և զախորժակ միանգամայն ·
Որ զինչ պատուիրեսցես՝ հակիրճ խօսիք լէր համառօտ,
Զի փոյթ առցեն միտք հըլուք և անկորուստ կալցին ըզբանն ·
Ամենայն աւելորդ 'ի թաթաղուն սըրտէ զեղու ·
Պաճուճեալքն 'ի զուարճութեան պէտըս՝ լիցին հուպ ճըշմարտին,
Մի զորպէս պահանջեսցէ գոլ առասպելդ հաւատարիմ,
Մի զկերեալ վըհուկ ձուաղանն ողջ 'ի պորտոյն հանցէ մանուկ ·
Նչախմբք ալևոր՝ զտաղս հալածեն անշահեկանս,

Նա կրկին հարցանէ զմանուկն, թէ յերկուց գարեաց անտի բարձեալ մին գայ յաւելու, ոչ 'ի մնացեալ երիսն, այլ 'ի նոյն յառաջին հինգ թիւն, զինչ լինի: Նա զնէ զպատասխանին՝ թէ կէս դանգ, որ է վեց գարի՝ որպէս ասացաք ·

329 · Ագահութիւն իբրև ժանգ երկաթոյ կամ պղնձոյ մանռուն 'ի հոգիս և զըժուարաքննելի է: Արդ, ասէ, ուր այսպիսի ագահութեամբ տոգորեցին ոգիքն, կայցէ՞ անդ յոյս այնպիսի տաղից՝ որ իւղով եղենեաւ ծծեալ պահպանեսցին իբրև զանձ պատուական 'ի նոճեայ սըրտատուփ արկեղ: Զի եղենի իւղով ծծանէին 'ի հնումն զմատեանս գրեանն, և պահէին յողորկ և 'ի պայծառ արկղ նոճի՝ առ անապական մնալոյ 'ի ցեցոյ և 'ի փտութենէ:

332 · Ամենայն քերթուած կամ առնուլ յաւուրցանել ինչ է, կամ առնել 'ի զուարճացուցանել, կամ զերկոսին միանգամայն խառն գործել: Արդ եթէ խրատ ինչ աւանդես, լեր համառօտ և վճռաբան · զոր պատշաճի որմնակէս իւր ուսուցանէ Որատիոս 'ի բոլոր քերթողականին առա: Զի ամենայն առաւելուածն և աւելորդն հոսէ և թափի յուշոյ մտաց իբրև 'ի թաթաղուն և զեղուն ամանոյ, ուր աւելին քան զչափ իւր ոչ մնայ, այլ արտաքս հեղու: Իսկ եթէ առ 'ի զուարճութիւն ինչ առնցանես, մերձաւորք ճշմարտին լինիցին և հաւանականք · և մի զոր ինչ և կամի առասպելդ պահանջեսցէ հաւատալի լինել, մի յանդգնեսցի իբրև արժանահաւատ ինչ յառաջ բերել · մի, օրինակ իմն, զկերեալ և զկլեալ տղայն 'ի ձուաղէ կամ 'ի մարդակերէ՝ հանցէ կենդանի 'ի փորոյ նորա ·

340 · Հասունք հասակաւ և ծերունիք անգամանեն խառնեն և մերժեն զանօգուտս և զանօգուտ քերթուածս · իսկ երիտասարդք խրախոյք և բարձրամիտք կամ բարձրամիտք քամահարար անտես առնեն զխստակրօնն և զխրատականն: Վասն որոյ զամենայն վճիռ հաճութեան հաւանութեան առնու՝ որ զօգուտն ընդ հեշտութեան խառնէ 'ի քերթուածն իւրում: Այնպիսի մատեանն, առ յաճախութեան գնողացն, շահ բազում արծաթոյ բերէ Սոսեանց, գրավաճառաց Հռոմայ · փափաքելի եղեալ նոցին յոտար աշխարհաց, և անդր ընդ ծովս անցանէ · և հռչակաւոր մատենագրին երկարօրեայ կեանս յաւելու՝ կենդանի պահելով և յետ մահու զհամբաւ և զանուն նորա յազգս յաւիտենից ·

Նկարեսցէ վսեմական՝ զօրոտպատեսակս յընչաց քերթն.
Զամենայն լինու զհաճոյս որ զպիտանին խառնէ 'նդ անոյշ,
Ընթերցողին 'ի հեշտանս ընդ նոյին զուգ և առ 'ի խրատ.
Նոյն մատեան շահի Սոսեանց արծաթ, ընդ ծով այն անցանէ,
Եւ երկայն յաւիտեանս հռչակելով նոթձէ գրչին.

Սակայն են նյանցանք որոց հաճոյ թուի ներել.
Զի և ոչ լար զոր կամի ձեռնըն և միտք՝ արձակէ ձայն,
Եւ ըղթաւ պահանջողին ըղզունկըն տայ բաղում անգամ.
Եւ ոչ աղեղն հարցէ միշտ՝ ուր միանգամ ըսպառնասցի.
Բայց ուր բաղում ինչ փայլէ 'ի քերթածի՝ չտարայց ընդ միտ
Ըզսակաւ ինչ արատ զոր կամ եհեղ անհոգութիւն,
Կամ թէ բնութիւն մարդկայլին ըստ արժանի չըզգուշացաւ.
Զինչ ապա. զոր օրինակ գրագէտ դըպիր՝ թէպէտ խրատեալ,
Եթէ զնոյն մեղիցէ ցանգ՝ ոչ արժանի է թողութեան,
Եւ ծաղըր կայ քնարահար՝ որ միշտ 'ի նոյն լար սխալէ,
Նոյնպէս ինձ զըթեալն յաճախ լինի վրիպակն այն Խիրիլոս
Զոր լաւութիւն երկից ուերիցս հանդերձ ծաղու զարմանամ,
Եւ նոյն ինքնըս ցասնում յորժամ նիրհէ քաջըն Հոմեր.

351. Ակնարկէ և թեթև թերութեանց ինչ արժան է համբերել և ներողամիտ լինել. զոր և օրինակօք լարի քնարին և աղեղան յայտ առնէ: Զի ակնարկս չէ եղեալ 'ի գիտութիւն հօր բանին և ոչ 'ի ձեռս նոր է, իսկ թեթեւն՝ իբրև գոյքն ինչ անփոյթ արարեալ է կամաւ, կամ սխալեալ և անզգաստ բնութիւն մարդկային ոչ է կարացեալ ըստ արժան բաւականին զգուշանալ 'ի մանունց անտի՝ յառեալ ուշի ուշով 'ի մեծամեծ գեղեցկութիւնսն և յափշտակեալ 'ի նոցանէն: Զոյգ ամին բարբառի և Լոնգինոս յոյն 'ի Ճառն Վսեմին. գլ. լէ:

353. Իսկ զինչ ապա. ուրեմն այսպիսի մեկնութեանցս արդարացուցանել և անբասիր առնել պարտ իցէ զամենայն սխալումն քերթողաց: Ոչ, ասէ. այլ որպէս դպիր եթէ ցանգ զգուշացուցեալ և ցանգ սխալիցի 'ի նոյն առաս, անարժան հանդիպի ներողութեան, և ծաղր լինի քնարահար՝ որ յար և հանապազ 'ի մի և 'ի նոյն լարի կամ 'ի մատին վրիպեսցի. այսպէս առեալ առեալ սխալեալ և անհեթեալ քերթողն, յորում յաճախագոյն են մեղանք և ագեղութիւնք քան զուղղութիւնս և գեղեցկութիւնս, համարեսցի ինձ իբրև զԽիրիլոսն զայն յոյն բանաստեղծ անարուեստ և անհամեմատ առ Աղեքսանդրիւ մակեդոնացւով. ընդ որոյ եթէ ընդ զուեքիս ինչ զարմանայցեմ ուրեք երբեք, սակայն ծաղրեմ ևս ընդ քինս 'ի վերայ յառութեանցն, և թէ զիարդ ընդ այնքան և այնպիսի անպիտանութիւնս գտանիցին և զարմանալոյ ինչ արժանիք: Այս քերթող ասանգիւրմանց այն լինել, առ որ ասացն Աղեքսանդրոս՝ թէ ըղձալի է ինձ 'ի Հոմերոսի վերսն Թերսիտես գոլ քան 'ի քուեդ Աքիլլէս: Նուկրիոս ևս յիշատակէ 'ի Փրոնեկոնին Քիրիլոս զոմն անուն, բայց ձեր ասեաս յառաջ քան զժամանակն Աղեքսանդրի մեծի, առ առաւելով Աղեքսանդրիւ մակեդոնացւոյ այլպիսի: Սմանք զՀոմերոսի բառն oberrat զքնարահարէն՝ իմացեալ են որ միշտ 'ի նոյն լար գեղեկի, որ հարկանէ միշտ զնոյն լար. բայց ուղիղ ոչ է ըստ ամենայն հաւատարիմ մեկնչաց. զի բանն զսխալելոյ է միշտ 'ի նոյնս, և ոչ զաղաղական յարամայնութենէ:

358. Իսկ ընդ հակառակն զժգմիմ խոժոռիմ և իբրու ընդ անձին ողորմիմ յորժամ

Սակայն յերկար 'ի վաստակ մարթի թէ քուն սպրդեսցի ։
Քերթուած , որպէս նկար , է ինչ՝ որ մօտ եթէ կայցես ,
Նա է՝ որ քան 'ի բաց կացեալ ըզքեզ յինքն յանգուցէ ։
Սիրէ այս ինչ ըզմութ , լուսով կամի զայլ այն 'ի տես
Որ 'ի նուրբըն սրութենէ դատաւորին երկընչի ոչ ։
Գամ մի եղև սա հաճոյ , նա տասն անգամ լիցի՝ կրկնեալ ։

Ո՛վ երեցըդ պատանեաց , թէ և ձայնիւ հայրականաւ
Յուղիղ անդըր թեքիս և դու քեզէն ես իմաստուն ,
Զայս քեզ առջիր ասացեալ՝ յեռեալ 'ի միտըդ անմոռաց ։
Են են ինչ՝ որոց ուղիղ շնորհի միջակն և տանելին ։
Չափաւոր իրաւագէտ և դատաւոր ոք ատարէն
'Ի պերճախօս Մեսալայն հեռի գընի քաջութենէ ,
Նա չէ գիտուն Ա՛ւլոսի Կասկելեայ չափ , սակայն յարգի ։
Քերթողաց՝ ոչ մարդ ոչ դիք ոչ սիւնք ներեն լինել միջակ ։

նիրհէ երբեք ուրեք քաջն Հոմերոս , զայն թեթև ազատաւորութիւն անգամ անվայելուչ համարեալ այնպիսոյ քաջի և սիրելւոյ քերթողահօր ։ Եւ սակայն 'ի գործս երկայնս իբրև զհորայն՝ չէ ինչ զիւրին յամենայնի ամենայն ուրեք արթուն և զգաստ գտանել և ոչ նիրհ առնուլ բնաւ ։ Են որ զբնագրին quandoque խմնդալով առ Էբէնէ , այսպէս յարմարեն զիմաստն . Ընդ Քերիլոս երկիցս և երիցս հանդերձ ծաղու զարմանամ , բայց և ցասնում իսկ . երբեմն նիրհէ և քաջն Հոմերոս , սակայն յերկար վաստակ որպէս 'ի նորայն գիւրին է քնոյ սողոսկել ։

360 · Որպէս և Սիմոնիդէս ասէր քերթողն , բանաստեղծութիւնն է խօսուն նկարչութիւն , և նկարչութիւնն՝ լուռ բանաստեղծութիւն ։ Նա բանիւք նկարէ , սա երանգովք խօսի . երկոքին այլ և այլ միջնորդաք զմի և զնոյն գործ վճարեն զկրան կենդանագրել , ուսուցանել , զարմել և հեշտացուցանել ։ Եւ ինչ որ 'ի մասոյ բարի երեւի 'ի քերթուածս՝ որպէս 'ի նկարս , և է որ 'ի հեռաստ ։ Խմս զայս թէ զամբողջ քերթուածէ , և թէ զմասանց քերթուածի ։ Եւ ինչ որ խնամով յօրինեալ չերկիւղի 'ի լուսոյ և 'ի մասգիւր նկատողութենէ , և միշտ ախորժելի լինի . և է որ իբր հեռաւոր տարերս ուրուագրեալ միայն հեռի կամ աղօտ տեսութիւն պահանջէ , և ընդ այլ զխառոր և կատարեալ մասանս գեղեցկութիւն գործէ , և չափաւ յինքեան ևեթ տանէին նկատել զայնս . կամ միանգամ ևեթ անեալ վեր 'ի վերոյ և 'ի հարևանցի՝ չլինի անհաճոյ , բայց յերկար և մանր զննութեան ոչ ժուժկալէ ։ Այսու աւանդ կամ մասն հայելի է յամենայն քերթուածս , և մի զամենայն միով կշռով կշռել և միով դատաստանաւ դատել ։

365 · Դարձուցանէ զբանս բանին առ երէցն յերկուց անտի եղբարց պիսոնեանց , զորմէ ասէն 'ի քերթութիւն զանկասեալ և ուղղերդութիւնս ինչ յօրինեալ ։ Թէպէտ , ասէ , և բանիւք հօրդ խրատիս յուղղութիւն և 'ի լաւութիւն քերթուածոց , սակայն առ 'ի յաջութեան քերթող երևել՝ զայս զմի խրատ քեզ համարեալ յուշի պահեսս . զի թէ այլոց գիտնոց կամ ձեռնարկաց շնորհեալ է չափաւոր , միջակ և տանելի լինել , սակայն քերթողաց ամենևին ոչ ։

370 · Վալերիոս Կորվինոս Մեսալա էր ձեռնարկանօս անուանի ժամանակին , և Աւլոս Կասկելլիոս՝ հզօր իրաւագէտ ։

372 · Դիք խմանին Ապողոն և Մուսայք դիք բանաստեղծութեան ։ Իսկ սիւնք՝ էին 'ի գաւթի ուրեք Հռովմայ , ուր գրավաճառք վաճառէին գիրս , կամ կախէին զնոցանէ զվաճառելի գրեանն և զյայտարարութիւնսնոցին ։ Զմիջակային և զհեռանակ քերթողաց գիրս մերժէին գրավաճառք , և ոչ հանէին յերևան . զի ոչ ոք կայր նոցին առ գնող ։ Ըստ այլոց խմանին սիւնք պա-

Իբր 'ի հեշտ խնճոյս փչասեն անմիաբան արուեստականք
Եւ թանձր օծանելիք և ընդ սարդիկ մեղու խաշխաշ,
Զի էր և առանց սոցին յընթրիսն խրախճանալ.
Նոյնպէս տաղք 'ի հեշտութիւն ոգւոց ծնեալք և հնարեալք
Եթէ դուն ինչ 'ի բարձուէն ընկըրկեսցին՝ գըլին 'ի սոր։
Որ խաղուց չիցէն տեղեակ՝ յասպարիսին խորշի զինուց,
Անհըմուն անուոյ՝ գընդի և շարժական նըստի հանդարտ,
Զի մի քըրքիջ աներկիւղ բարձցեն ակումբք կուռ բոլորեալք.
Որ անգէտն իցէ տաղից՝ ժըռի սակայն բանեղծանել։
Ընդէր ոչ. ազատ՝ ազնիւ և մանաւանդ դրամից գըլխով
Ասպետաց թիւ ասպետական և անարատ ամենևին։
Դու մի խօսիր կամ առներ ինչ յակամայս Աթենասայ.
Այն քո խելք և այն է միտք. իսկ եթէ ինչ հարցես 'ի գրի,
Իջցէ յունկըն դատողին Մետեայ՝ 'ի հօր քոյ և 'ի մերս,

ըստանան տաճարին Ապողոնի և մատենադարանին՝ շինելոց Աւգոստեայ հրամանաւ յապարանս իւր, ուր ընթերցեալ լինէին ընտիր ընտիր քերթողացն մատեանք հռոմոց քննութեամբ, և ապա գանձեալ անդէն 'ի պահեստ։

373. Օրինակ իմն, որպէս 'ի հեշտալի խրախճանս կոչնոց՝ փոխանակ օգտի վնաս են անմիաբան անյարմար նուագածութիւնք, և թանձրամած ապականեալ իւղ օծանելի, և խաշխաշն ընդ մեղուն Սարդիա կամ Սարդինիա կղզւոյ, ուր առ դառնութեան բուսոցն դառն է և մեղրն. զի չէր ինչ կարևոր պէտք այսգոյնի, այլ 'ի հեշտութիւն միայն լինելոց էին՝ թէ լինէին ըստ պատշաճի. այսպէս իմա և զքերթուածս։ Սպիտակ խաշխաշի սերմն, ըստ Պլինիոսի, աղանձեալ՝ 'ի սեղան աղանդերոց նախնեացն մատուցեր հանդերձ մեղու։

378. Իմա զխաղս մարմնոյ հրահանգաց 'ի կրթարանս արքունեան ասպարիսին, ուր մանկունք հռոմէական ընդ. կիրթ ելանէր։

382. Զայս իմա հեգնորէն 'ի դիմաց կամ ըստ կարծեաց անհանճար և անարուեստ քերթողի ուրուք։ Զիմ՞ ոչ քերթիցեմ, ասէ, տաղս. ո՞չ ապաքէն ազատազգի եմ և ազնուական, և որ մեծն է՝ ըստ հաշուի գլխոց արծաթոյ համարեալ եմ 'ի դաս ասպետաց կամ ձիաւորաց, որ էր քառասուն բիւր դրամից. և յամենայն ախտէ զերծ, որպէս թէ անմեղութիւն վարուց միայն բաւական իցէ կամ նպաստ ինչ 'ի բան քերթողութիւն։

384. Աթենաս էր աստուածուհի իմաստութեան և հանճարոյ և ամենայն ճարտարութեան։ Քո, ասէ, իմաստութիւն և ուղիղ ընտրութիւն այն լիցի, զի հակառակ հանճարոյ քում և բնաւորութեան կամ առորմանկի յակամայ կամս մի ինչ խօսեսցիս իբրև ճարտասան, և մի ինչ առարասցես կամ ստեղծցես իբրև քերթող կամ ճարտար։ Եւ զխսեմ թէ այսպէս առնիցես. զի այնպիսի իսկ կամ այնչափ է քո խելքդ և միտքդ։ Իսկ եթէ գրեսցես ինչ, մատիցէ այն յունկն 'ի լսել Սպուրիոսի Մետիոսի Տարպեայ՝ լաւի քննողի և դատողի քերթուածոց և քերթողաց 'ի նախատասցեալ պալատեան տաճարին Ապողոնի և Մուսայից և 'ի մատենադարանին, այլ և յունկն հօր քոյ և 'ի մերս՝ յանդգնադատաւորաց։ Եւ յետ այնորիկ եւ՝ մանեանդ 'ի ներքս 'ի տան կամ յարկեղոյդ պահեսցին զամս ինն, այս ինքն է բազում, առ ուղղել և յղկել եւ քանն զնա։ Զի մարթի ջնջել և կարուածնել զոր չեն է 'ի լոյս ելեալ. իսկ միանգամ 'ի դուրս ելեալ բարբառ կամ մատեան, ոչ եւ այնուհետև գիտասցէ դառնալ յետս։ Զինն թիւն, որպէս եղաք, փոխանակ բազմի առնուն. այլ ընդ էր ինն, և ոչ եօթն կամ ասնուն։ Թերևս վասն ինունց եղելոց Մուսայիցն, գլց քերթութեան, դստերց Մնեմոսինեայ, որ է յիշողութեան. զի մի բառ միջէ յոյժ արբանցէն նմա զուգալեան եղջարմարեցի։

Եւ գրեալն առ, մագաղաթիցդ 'ի ներքս արկեալ, կացցէ 'ի պահ․
Ոչ ջնջել զանուանն 'ի լոյս, ձայն արձակեալ չունի դառնալ։

Զվայրագ մարդիկ սուրբն Որփեւս եւ աստուածոց պատգամաւոր
Յարեանց ու 'ի շաղգակեր վարուց կենաց դարձոյց 'ի բաց,
Ասի զվագերս հանդարտեալ եւ զամեհիս կակղել առիւծս։
Եւ Ամփիոն՝ ոստանին պատմի կերտողըն Թեբայեցւոց
Զքարինս 'ի ձայն փանդռան դղրդեցուցեալ ստուգանել
Եւ առնք աղաչանօք տանել բերել յուպէտ յուկամ։
Այս երբեմն իմաստութիւն եղեալ՝ ընտրել ըզգօնաբար
Զսուրբսըն 'ի պղծոց եւ զաշխարհին յիւրոց անձնիւր,
'Ի մոլոր կարձել խառնից, գրել զաշինս կանամբեաց,
Աւան կառուցանել, գրծել օրէնս 'ի տախտակի․
Այսպէս եկն 'ի գիւցական Ճարտարս ու 'ի տաղս անուն եւ փառք։
Յետ սոցա մեծըն Հոմեր եւ Տիրտէոս 'ի նուագս երգոց
Զոգիս արիականս յարիական վառեցին զօռ։

389․ Զի մի այսպան խրատուք զգուշութեան ահաւորեկ պարարեալ լինիցին ի՞նչ զինուորեանն կամ սարսուցել 'ի քերթողութենէ, սկսանի այժմ զգովութիւն եւ զպարծանս քերթութեան եւ քերթողաց համառօտիւք 'ի հանդէս արկանել։ Որփեւս կամ Որփէոս վարդապետական քերթող ոմն էր եւ երաժիշտ Թրակացի․ եւ իբրեւ աստուածարեալ անձն, եւ զի՛ց պատգամախօս՝ երբեն հրեշտակ 'ի գիմաց նոցա եկեալ առ մարդիկ, որդի ասացեալ Ապողոնի եւ Կալիոպէ Մուսայի։ Քաղցրութեամբ եւ իմաստութեամբ տաղիցն զգօնացոյց զառաջին զվայրենի մարդիկն՝ հրաժարեցուցեալ յաբունաճեղութենէ միմեանց կամ յմսկերյ զարիւն եւ յուտելոյ զհում միս որսոց վայրի։ Լատին բնագիրն ունի 'ի գոյնի [illegible]․ զոր ոմանք խառնադրութ խառնածնական անասնակենցաղ կեանս իմանան։ Իսկ այլք գիշակեր կամ շաղգակեր, որ նման են․ զի ահա անգէն իսկ առ նմին 'ի վագերս եւ յառիւծուծս արինակին։

392․ Ամփիոն նմանապէս էր մի 'ի հին երաժշտաց եւ քերթողաց, որդի համբաւեալ Արամազդայ եւ Անտիոպայ․ զորմէ զրուցեն առասպելք՝ թէ Ճարտարութեամբ մատանց քնարին եւ քաղցր նուագօք շարժէր տանէր քար կամ եւ քար պէտս զքաղ[ա]քին, եւ նորօք զԹեբայեցւոց քաղաքն կանգնէր։ Որ է ասել, թէ զվերս եւ զխիստ ուրբարն 'ի շինութիւն եւ քաղաքական կեանս յորդորեալ յանկուցանէր։ Ոչ Որփէի եւ ոչ Ամփիոնի տաղք ինչ կան առ մեզ․ որփէականք ինչ որ երեւին՝ անվաւերականք են։

395․ Նախնի քերթողացն գործ այն էր, ասէ, որոշել զսուրբն 'ի պղծոց, այսինքն ուսուցանել զինչ սուրբ իցէ եւ բարի, զինչ պիղծ եւ չար․ զատանել զհասարակացն յաւանձնականաց, առ հասարակութեան սատուել պատկառ կալ քան անձնականաց․ արգելուլ 'ի մոլորական եւ 'ի Թափառական խառնից անօրէնութեան, եւ առանց օրէնս հարսանեաց կարգել․ քաղաքս շինել, օրէնս դնել, եւ այլ այսպիսի կենցաղօգուտ իրք։ Եւ այսպէս անուն եւ փառս ժառանգեցին աստուածայինն քերթողք եւ քերթուածք։

400․ Հոմերոս յայտնի է ամենեցուն։ Իսկ Տիրտէոս կրտսեր ուրեք քան զՀոմերոս՝ էր անուանի քերթող աԹենացի, որոյ կան ցայժմ չորք տաղք խրախուսիչք մանկտւոյ 'ի մարտ եւ 'ի մահ գեղեցիկ 'ի վերայ հայրենեաց։ Արիական ասել է պատերազմական․ զի Արէս էր դիք պատերազմի։

Տաղիւք պատգամք խօսեցեալք և ճանապարհ կենաց ցուցեալ,
Պիերեան եղանակօք թագաւորաց խնդրեալ շնորհք,
Եւ խաղուց եկեալ 'ի գիւտ՝ երկայն երկոց գուլ և հանգիստ։
Մի կրկին 'ի վին Մուսա ւերգիչն ամօթ թուեսցի քեզ Նայոյն։

Խնդիր է, բնութեամբ լիցին թէ արուեստիւ տաղք գովելիք։
Ես ուսումն կրթութեան առանց առատ ճոխ երակաց
Եւ ոչ թէ զինչ բիրտ հանճար օգուտ լիցէ՝ տեսանեմ ես.
Այսպէս սիրով դաշնաւոր զմիմեանց նպաստ հայցեն գործ։
Նկրտեալն 'ի ցանկալի ասպարիսին ժամանել կէտ
Վաստակեաց յոյժ 'ի տղայ տիս՝ 'ի քիրտն 'ի ցուրտ համբերատար,
Ժուժկալեալ հրաժարեաց յԱստղկանէ և 'ի գինւոյ.
Որ զպիթեանս երգէ փողար՝ ուսաւ սաստիւ նախ վարժողին։
Զարդիս շատ է ասել՝ ես հրաշալի տաղս յօրինեմ.
Զյետնեալն քոս առցէ, ամօթ է ինձ յետոյ մնալ՝
Ստուգիւ զոր ոչն ուսայ զանգիտութիւն լեալ խոստովան։

Զոր օրինակ վաճառուց զամբոխն 'ի գին խրախէ քարոզ,

402. Ոտանաւոր և չափական բանիւ խօսեցան պատգամք գէց և խորաց վարուց ուանդեցան. պիերեան եղանակօք, այս ինքն երաժշտաց և Մուսայից նուագօք որ 'ի Պիերիա լերին Բիովտիոյ օթագեալք և պիերեանքն կոչէին, որ է ասել դարձեալ տաղից երգովք խնդրեցան շնորհք կամ հաճանաւորութիւն արքայից. և խաղք թատերականք հնարեցան 'ի դիւր և 'ի հանգիստ պարապոյ և տօնական աւուրց աշխատելոցն երկայն վաստակովք։ Այս ամենայն բարիք 'ի քերթութենէ յառաջ եկին, ասէ. վասն որոյ մի ամօթ ինչ համարիցիս զՄուսա՝ զձայնաւորն 'ի քնար, և զերգողն Ապողոն, այս ինքն է զքերթողութիւն. որ թէ չիցէ ճարտար և նուագաւոր, յայնժամ արդ չիցաւի յամօթ համարեսցի։

407. Առատ և ճոխ երակ որպէս աղբերց և բովոց՝ է յորդութիւն բնական և ծննդոց բնատուր հանճարոյն, որ հիմն է ամենայնի. բայց արուեստն ուղղէ և կատարէ զայն։ Հանգոյն Որատեայ խօսի և Լոնգինոս յոյն յաղագս այսր խնդրոյ 'ի Ճառի Վսեմին. գլ. Բ. Է։

410. Որ ցանկայ ընթանել զնպատակին և զկրցանակն յասպարիսական մրցութեանս, 'ի մանուկ տիոց յայն կրթի. ընդ քիրտն գայ և ընդ ապաժոյժ, և 'ի ցրտոյ բրտանայ և ամենայնի համբերէ, ժուժկալէ յառաջիկեան հեշտութեանց առ 'ի պահպանել զարութիւն մարմնոյն, նա և 'ի գինւոյ ևս։

413. Փողահարն որ նուագէ 'ի հանդէսս պիթեան խաղուց ապողոնեան տօնին, յառաջագոյն ուսանի երկիւղածութեամբ 'ի վարժապետէն։ Իսկ այժմ 'ի գծուարագոյն արուեստիս բանական է ասել միայն անձնապանծ խրոխտանօք, թէ ես զարմանալի քերթածս հիւսեմ. և անէծս կարդալ, թէ քոս հասցէ այնմ որ երկուցեալ յետս մնասցէ. ինձ ամօթ է այդ. և ճշմարտիւ խոստովանել թէ չգիտեմ զայն ինչ զոր չեմն կրթեալ։ Քոս առցէ ասելն ուսակաւոր անէծք են, առեալ 'ի խաղուց մանկտւոյն, որ այնպէս անիծանէին որոց կասեալ յետս մնային յարշաւ։

417. Սկսանի այսուհետև զգուշացուցանել 'ի շողոմարար և 'ի շնթող գտաւողանց և գովարանից։ Որպէս հրապարակին կոչնակ, ասէ, զժողովուրդն 'ի գին վաճառուց կամ յաճուրդս՝ յասով շահից, այս

Հրաւիրէ զմարդահաճոյս զինալ 'ի շահ և բանաստեղծ
Մեծատուն ագարակօք, դաշնեկանօք վաշխից փարթամ։
Իսկ թէ իցէ որ առատ կոչնականին տալ բաւէ 'ի դէպ,
Մըտանել երաշխաւոր կալ փոքրոգի չքաւորին,
Եւ թափել ըզպաշարեալն 'ի միգապատ դատից փութիշ,
Զարմանայց թէ գիտիցէ 'ի բազմերանն արբեցութեան
Ընտրել ըզճըշմարիտն 'ի նենգաւոր բարեկամէն։
Դու թէ ումեք շնորհիցես կամ թէ շնորհել ինչ կամիցիս,
Մի առ քո քերթեալ տաղս ըզզուարճալիցն ածեալ տանիր.
Զի անդէն գոչիցէ՝ վաշ, գեղեցիկ, բարւոք, ազնիւ.
Դալկասցի առ սոքօք, աչըքն սիրունք բաւեսցեն ցօղ,
Վազեսցէ 'ի վեր ընդոստ և կայթս ոտիւքըն զարկեսցէ։
Զերդ վարձաւորք 'ի զխահամս որ կոծ ջայլեն եղերամարք
Բաւել աւելն առնեն անդ քան ըզլուն սերտ սըգաւորս,
Այսպէս կատակն այպանող քան զհաւատարիմն շարժի գովել։
Ասեն զարքայս յորդ գինեաց նուազօք նեղել և խոշտանգել
Ում ջանան գոլ խելամուտ թէ արժանի սիրոյ իցէ։
Տաղս հիւսեալ քո՝ քեզ մի ըստ դաւեսցեն միտք աղուեսակերպք։

պէս և մեծատուն բանաստեղծն զատակապաս։

420 · Իսկ եթէ իցէ որ, որ մեծութեամբն կամ առատութեամբն բաւական են զայս մեծամեծոք պատիւ տալ հրաւիրելովն, յերաշխի առնուլ զթեթեւամիտս և զողորմ և նենգաւոր կամ զամենեյն և զզօս աղքատն, և ազատել 'ի խաւարային դատից զվարանեալն, զարմանալք իցեն եթէ կարասցէ այնպիսին 'ի կարծեաւ երանութեան անդ ընտրութիւն առնել ճշմարիտ և սուտ բարեկամին։ Զի չթողացուցեն զայն նմա շողոքորթութիւնք երախտաւորելոյն, որ բարեմարդիկն կամին ընել պաշտօն առնելով։

426 · Զայնմանն զուարճութեամբ ընկալեալ շնորհացն առ 'ի քեն կամ յուսով ակընկալութեան ընդունելոյն։ Զի ընդ ըն-անն զոյոյ, 'ի գովեստ արձակեսցէ զձայն։ 'Ի վերայ այսոցիկ՝ ձեռայն են, թէ առ թիգալ սրտին և ոգւոյն խառնել՝ իցէ թալուկ ինն զարտուն գայցէ, և այլ յայլմէ ըևալ հասցի 'ի զմայլելն, և առ գործանանն արտասուեսցէ 'ի սիրայօրգոր աչացն, և այլն։ Ամենայն առ երեսս եւ ստութեամբ, որպէս լալականքն առնեն առ մեռեալս այլոց, որ քան զբուն սերտ զնացելոյն տառել զհոծն ստուկացուցանեն և զզովասանութիւնս հրաժարելոյն։

433 · Միտս ասին յաղթօնք 'ի հարցատ ներանց. որք իբրև կամին փորձել զոք՝ թէ իցէ բարեկամութեան իւրեանց արժանի, բազում գինեաւ տաղնապեն, և իբրև թէ 'ի հարց փորձ արկանեն. զի յորոց 'ի զըւարթութեան անդ համարձակ զարծիցէ, անատուս 'ի միտ ածցեն զարժանիս նորա։ Այսպէս և դու 'ի ցնծութեան անդ մարդահաճոյից ծանիցես զնոսա։ Զգինին ճշմարտախօս ասեն և հին առակն. զոր և թեոկրիտեայ ասէ 'ի ԻԹ. Եւ մեզ արբեցողս պարտ է, ասէ, արդարապան լինել։ Բայց առաւ բուռ անխարդախ առաքութեան է համեմատութիւն ընդ սուտ կապասանն, այլ բառ զուարթամիտ առատութեան և համարձակ ճշմարտութեան։ Եւ 'ի քերթել քո տաղս՝ մի խաբեսցեն զքեզ նմանեալքն աղուեսու կեղծաւոր նենգամիտք. որ անհնարին յառաջ ազգեալոն, զի շողոքորթ գովութեամբք հան զգամին յագարան։

Կուինտիլեայ եթէ ինչ ընթեռնուիր, անէր ուղղեա
Փոքր ինչ աղէ զայս և զայս. թէ զուր ջրգնեալ զանձն ասէիր
'Ի կրկին փորձ ու երեքկին լաւագունին անձեռընհաս,
Տայր ջնջել զանկարգն տաղս և վերըստին ածել 'ի սալ:
Թէ ջատագով վրիպանաց ընտրէիր կալ քան փոփոխել,
Ոչ ևս այլ ընդունայն բան ինչ կամ ջան 'ի գործ ածէր,
Զի առանց նախանձորդի քոյովքդ և քև զմայլեսցիս լոկ:
Այր բարի և խոհական կշտամբեսցէ զտաղս անարուեստ,
Խըստիցըն մեղ դիցէ, և ըզպըրիշըն դարձուցեալ
Անարգիցն արկցէ սեաւ նիշ, ըզպերճանացըն հատցէ զարդ.
Լոյս պահանջեսցէ աղօտ աղօտ ծածկել տեղեաց,
Ցուցցէ զերկխօսութիւնն և զփոխելին արասցէ յայտ.
Լիցի Արիստարքոս և մի բարբառ յօդեսցէ ինչ,
Թէ առ իմ ես 'ի խաղս ըզմըտերիմ տըրտմեցուցից:
Խաղքըդ 'ի վնասս ծանր արկցեն զամ մի պատրեալ թէ ծանակ կայ:

Որպէս որ զի չարակեղ բոր կամ դալուկըն տանջիցէ

436. Այժմ տայ զօրինակ և զհանգամանս ուղիղ և անաչառ քննողի դատողի 'ի դէմս Կուինտիլիոսի Վարոսի Կրեմոնացւոյ՝ Հորատիոսի մտերմի. որ անկեղծաւոր և արդարակորով դատաւորն էր քերթածոց 'ի ժամանակին, և ինքն իսկ քերթող ականաւոր:

439. Իբրև 'ի սալ դարբնաց յառակ օրինակի, 'ի կաւել կոփել և վերստին ստեղծանել և կերպարանել զոր կամին էին:

442. Ցանկարարար քև և քոյովքդ քերթածովք դու միայն զուարճասցիս՝ առանց զոք քեզ նախանձորդ ունելոյ: Զի որ զոչ ուրուք նախանձելին ասէ, չունի զոք ինքեան նախանձաւոր:

443. Կարճառօտիւք ցուցանէ զգործս բարւոյ և անձնեայ դատողի: Յանդիմանեսցէ, ասէ, զանարուեստ և զանհարթ տաղս տաղիցն. տացէ զխաւան խնամոքիւ կամ բառիւք. զանշուքսն նշանակեսցէ ձգելով սեաւ գիծ կամ այլ ինչ նիշ արկանելով կողմանէ և առ 'ի չեղ չղջեալ զեղեգն կամ զգրիչն: Զի այնպէս առնէին հինքն առ անձնարկելոյ՝ թէ քերէին և ջնջէին էն այն տաղս: Զաւելորդ զարդս յապաւեսցէ, և այլն:

448. Արիստարքոս էր մեծանուն գրագէտ և գլխաւոր յԱղեքսանդրեան ճեմարանէն, աշխարհաւ Սամոթրակեցի, վարժապետ Պտղոմեայ Փիլոմետորի արքայի Եգիպտացւոց: Գրեաց յոլով մատեանս 'ի քննել դատել և ընտրել զքերթածս Հոմերոսի և այլոց քերթողաց յեկամուտ խորթութեանց և 'ի վրիպակաց գրչաց. որովք ժառանգեաց զփառս քաջի և ողջախոհ քննողին դատաւորի, մինչև կոչել աստուածային և մարգարէ. և արժանի օրինակ կալ յապա եկելոց քննարանից: Այսպիսի ոմն եղեալ քաջի դատողին, ոչ պատճառեսցէ թէ զի է ինձ 'ի խաղս և 'ի գուղձարկեայս վշտացուցանել զբարեկամն: Գուղձարկեայքդ չարիս մեծամեծս հասուսցեն նմա, եթէ երբեք խաբեալ միանգամ 'ի մարգահաճութենէ՝ ծաղր և քրքիջ կացցէ բազմութեան:

451. Ճարտար նկարագրել առնու զինքնահաճաւան քերթողն և զանսաստ դատաստանի քննութեան հեռի եղելոյ. և խրատէ թէ ընդ այնպիսումն զիարդ պարտ իցէ վարել: Որպէս եթէ որ, ասէ, փոփոխելի ախտիւ վարակեալ իցէ, կամ կատաղութեամբ մոլեգնեալ, կամ յԱնահտայ՝ այսինքն 'ի լուսնոյ հարեալ և լուսնոտ, այսպէս տղայն նման խորշին մերձին խնամոտանք 'ի մօտ քերթողէն, և հալածեն զերթալ երկիւղին. անմիտ մանկտին միայն

Կամ շամբուշ բանդագուշանք և զայրագինն Անահիտ,
'Ի մոլին հրպել բերթող խիթան ուշիմք փախչին 'ի բաց,
Խուսափեն մանկտին և անզգոյշք պնդին ըզհետ:
Բարձրամբիզ սա յորժամ տաղս ըզգայռելով շըրջի թափառ,
Օ՛ երդ հաւորս պէս 'ի կեռնեխս եթէ 'ի գուբ անկցի կամ հոր,
Թէպէտ յերկար գոչիցէ՝ ձեռըն տուք ով քաղաքացիք,
Ոչ ի գըտցի որ բընաւ՝ որ զնա հանել արասցէ փոյթ:
Թէ հոգ ոք տարցի օգնել և արձակել պարան 'ի խորս,
Զի՞ գիտես, ասիր դու, թէ ոչ կամաւ անկեալ չկամի փըրկել,
Ասացից, և զսիկիլեան բանաւորին պատմեցից մահ.
Տենչացեալ Էմպեդոկլէս յանմահից դիցն անցանել կարգ,
Սառն առեալ ցըրտագին ոստեաւ Էթնայ 'ի հրաբորբոք:
Արժան լիցի և օրէն բանաստեղծաց երթ 'ի կորուստ.
Որ բըռնի զոք փըրկեսցէ՝ չէ ինչ ընդհատ 'ի սպանողէն:
Ոչ մի անգամ արար զայդ, և ոչ թափեալ թէ մարդ լիցի,
Նա 'ի բաց թողուցու զհամբաւատենչ մահուն տարփանս:
Նա չէ յայտ ամենևին՝ ըզտաղս առ ինչ կարկատիցէ,

առ 'ի խաղ՝ և անզգոյշք ամանք առ հետապնդութեան անկանին ընդ նմա քննելով և գառնելով զերկրթանս նորա:

455. Բ-ռ-է-ր-ս-է-ր-ա-ն-ռ-ը. կես օրինակք և մեկնիչք գրերագիրք 'ի վերայ տողիցն առեալ՝ իմանան ընդ հենգն, Ս- յաւէրժամ դ-ա-ռ- հենա ըս-ա-յ-ռ-ե-լ-ով, և այլն: Նորպես sublimis բառ is յանգին թեպետ և յոգնակի հայցական ևս իմանի 'ի հին գրութիւնս հռովմէական լեզուի, բայց առ չէք ինչ պատճառ փոխելոյ 'ի sublimes յառաւէ հայցական, որպէս յայլ բազում անգամ գրոց փոխեալ են զայսպիսիս յետին տպագիրք: Արդ յորժամ մոլորեալ թափառեալ կայ, ասէ, անհրաժեշտ կարծեօք մնայն, և անկանի հոգւով 'ի գուբ խոյասութեան, կամ թէ և մարմնով ևս ուրեք՝ 'ի զանազանս ատանգերն, մի ոք հանցէ, մի աշխատ լիցի խրատել ազատել զնա. զի ո՞ գիտէ կամաւ և գիտութեամբ արկեալ է զինքն և չկամի զերծանել, կարծելով անդ իւր անուն: Որպէս երբեմն Էմպեդոկլէան սիկիլիացի, յաստուածական իմաստասէր և քերթող, որոյ յօրինեալ էր քերթուած մի բնաբանական, կամելով կարծիս տալ զանձնէ 'ի գիւտ փոխելոյ, ըստ որում պատմի, արկ զինքն զաղտ 'ի հրահոս լեառն Սիկիլիոյ յէթնէ, մազմէս կամ յերկրայ մահուն գրտացեալ, և կամ անկարեկիր անխուով անձամբ: Արիստոտէլ չկամի տալ Էմպեդոկլեայ զպարծանս բանաստեղծութեան. զի ոչ որ ինչ և միանգամ ոտանաւոր բանիւ է, ստեղծաբանութիւն իցէ:

464. Թող կորիցեն բանաստեղծք այդպիսիք՝ խելագարք՝ անձնահաճք. այսինքն կորուսցեն զանուն իւրեանց՝ որ վասն այնպիսի անմտաբար վտանգին, որ և արդէն իսկ ինքնակամ զինագրաւ 'ի կորուստ ընթացեալ են, և ոչ կամին լսել: 'Ի սպանողի համար մնանէ՝ որ յակամայ կամս նորին ապրեցուցանէ զնա 'ի փափաքելի և անուանի մահուանէն: Նա զի և ոչ առաջին անգամ է այդ՝ քերթողից այդպէս զայդ առնելոյ. և ոչ՝ եթէ և զայս նուազ ևս փրկեսցի 'ի գրոյն կամ յանդր անկանելոյն, զգաստացեալ յինքն գայցէ, մարդ լինիցի, ըստ որում ունի և յառաջին բնագիրն. զի անմահն և մոլին՝ մարդ ոչ է: Նա ոչ հրաժարեսցէ 'ի ցանկութենէն հռչակաւոր լինելոյ, թեպետ և մահուամբ լինիցի. այսոր փրկեալ, վաղվ դարձեալ 'ի նոյն խորխորատ հասեալ զանձն:

468. Նա զի և չէ իսկ յայտ բնաւ, թէ առ իմէ՛ և առ ինչ բախեալ կայ 'ի զամս այդ

'Ի հայրենի ոսկերացն իցէ յաճիւն միգեալ արդեօք ,
Թէ յանմատոյց սրբութիւն մրմըռնջելի մերձեալ անձամբ :
Սըրգարև մոլի նա , և օրինակ իմն իբր արջոյ
Ջ գայռագղին թէ խորտակել զընդդիմակաց զօրեաց խաղխամն ,
Ըզտըրգէտն և բանիբուն փախուցանէ ժանտ տաղասաց :
Իսկ կալեալ զոք՝ պլինդ ունի և ընթերցմամբ ըսպանանէ ,
Տզրուկ անբաժ 'ի մորթոյ մինչև արեամբ յագուրդ առեալ :

գև և ոգի և մոլորահոգմնաքերթողութեան։ Թերևս 'ի գիցինչ արժանահաս պատուհաս իցէ , ուստի և հարկ իսկ իցէ կործնել նմա 'ի վրէժ անօրէնութեան իւրոյ մեծի : Զի թերևս միգեալ իցէ 'ի գերեզման հօր իւրոյ , կամ պղծեալ զսրբարանն ինչ աճաւոր : Որ զինչ և իցէ յառաջեալցս ցայս վայր , այս Ճշմարիտ է՝ զի մոլի այրն . և իբրև արջ 'ի վանդակաց փախուցեալ՝ հալածէ զամենեսեան : Իսկ եթէ ըմբռնիցէ զոք յանկարծ 'ի բարեմիտ լսողաց , իբրև զտզրուկ ոչ թողու մինչև կշտացեալ լցցի արեամբ ցյագ , պարտաւորեալ զուարճացի ընթերցմամբ տաղից իւրոց : Նա ոգեսպառ կորուսանէ , հանէ թափէ զոգիս լսողին կարդացմամբն այնուիկ . և ընթեռնու՝ ոչ 'ի լսել զդատաստան այլոյ և ուղղել ինչ , այլ առ որսալ գովեստիս միայն :

# ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

## ՈՐ Ի ՔԵՐԹՈՒԱԾՍ


Աթենաս, 384։
Ալբինոս, 326։
Ակկեան, 258։
Ամփիոն, 392։
Անահիա, 452։
Անահտական, 16։
Անտիկիւր կամ Անտիկիւրա, 298։
Անտիփատր, 145։
Ապոլոն, 405։
Ասորի, 118։
Աստղիկ, 412։
Ատրեւս կամ Ատրէոս, 185։
Արգոս, 118։
Արիստական, 401։
Արիստարքոս, 448։
Արքիլոքոս, 80։
Աւլոս Կասկելիոս, 371։
Աքիլլես, 120։
Դաւոս, 236։
Դելփական պատգամք, 218։
Դիմոկրիտոս կամ Դեմոկրիտոս, 294։
Դիոմեդէս, 146։
Եգերացի, 118։
Ելիկոն կամ Հելիկոն, 294։
Եմիլեան, 33։
Եմպեդոկլէս, 462։
Եննեան, 258։
Եննիոս, 58։
Եսքիլ կամ Եսքիլոս, 277։
Եանէ, 463։
Թեբացիք, 392։
Թեբէ, 118։
Թեսպիս, 275։
Թիեստական, 92։
Իլիական, 129։
Ինով, 123։
Իքսիոն, 124։
Լատիոն, 288։
Լիկինոս, 299։
Կադմոս, 186։
Կասկելիոս Աւլոս, 371։
Կատոն, 58։
Կեթեգեանք, 51։
Կեկիլիոս, 55։
Կիկլոփս կամ Կիկլոպ, 145։
Կուինտիլիոս, 436։
Հելլէն, 54 · 268 · 286 · տես և Յոյնք։
Հոմեր կամ Հոմերոս, 75 · 358 · 400։
Հռոմ, 55 · 263 · տես և Հռովմայեցի։
Հռենոս, 18։
Հռովմայեցի, 113 · տես և Հռոմ։
Հռովմէական, 323։
Մեդէ կամ Մեդիա, 123 · 184։
Մելեագր կամ Մելեագրոս, 146։
Մեսալա, 370։
Մետիոս, 386։
Մուսա, 84 · 141 · 321 · 405։
Յոյնք, 321 · տես և Հելլէն։
Յով, 124։
Որեստ կամ Որեստէս, 124։
Որփեւս կամ Որփէոս, 389։
Պելեւս, Պելէոս, 97 · 104։
Պիերեան, 403։
Պիթեան, 413։
Պիսոնեանք, 6 · 234։
Պիւթիաս, 237։
Պլաւտեան, 269։
Պլաւտոս, 55։
Պոմպիլեան, 290։
Պրիամոս, 137։
Պրոկնէ, 186։
Սարդիկ կամ սարդիացի, սարդինիացի, 374։
Սիլէն կամ Սիլենոս, 238։
Սիկիլեան, 461։
Սիմոն, 237։
Սկիլլա, 145։
Սոկրատեան, 308։
Սոսեանք, 344։
Վարիոս, 56։
Վիրգիլ կամ Վիրգիլիոս, 56։
Տելեփոս, 97 · 104։
Տիրտէոս, 400։
Տրովա, 141։
Տրովական, 147։
Քարիբդիս, 145։
Քերիլոս, 356։
Քրեմէս, 95։

## ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐԻ՛Ն

| ԷՋ | ՏՈՂ | ՎՐԻՊԱԿ | ՈՒՂԻՂ |
|---|---|---|---|
| 25 | ծան. 143 | սկզբնաւորութիւնն | սկզբնաւորութիւնք |
| 32 | ծան. 250 | չորք մեծավերջ | չորք մեծավերջք |
| 37 | ծան. 317 | 'ի աւգիս 'ի աւգիս | 'ի աւգիս աւգիս |
| 42 | ծան. 392 | 'ի շինութիւն և քաղաքական կեանս | 'ի շինութիւն և 'ի քաղաքական կեանս |

Զկուինտոսի Որատեաց Փլակկոսի զարուեստն քերթողական փոխաբերեալ 'ի չափս հայկականս՝ վասն ճշգրիտ, ճարտարահիւս և վսեմ թարգմանութեանն արժանի տպագրութեան համարեցաք։

ՔՆՆԻՉՔ ԳՐՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՍ

3.50